**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 հունվարի 2017 թվականի N Մ-001-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով Չեխիայի Հանրապետությունից՝ քանդակագործ Դավիթ Երևանցու (Բաբայան) կողմից, Երևանի քաղաքային համայնքի համար որպես նվիրատվություն ուղարկված քանդակը (մեկ տեղ, 145 կգ ընդհանուր քաշով, 75,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 23,602.50 չեխական կրոն, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2017 թվականի N Մ - 002 -Ա
քաղ. Երևան

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 7,080,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ռոբոտաշինության երեք խմբակների հիմնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սի Ի Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137791) 2016 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N WVA/CO/YOUTH/SUPPLY/01/FY17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «45544 LEGO MINDSTORMS Education EV3 Core 30» հավաքածուի մատակարարում՝ 7,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետու-թյան կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Շիրակի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Էդիլյան

15 դեկտեմբերի 2016թ.

## «Ռոբոտաշինության երեք խմբակների հիմնում»
## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարձրացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդների կրթական մակարդակը և օգնել նրանց մասնագիտության ընտրության հարցում՝ դպրոցներում հիմնելով ռոբոտաշինության խմբակներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Թայվանի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK |
| 4. | Ծրագրի կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռ.Մելիքյան փող., 1, ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արագածոտնի մարզի Քուչակ և Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքներ<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7,080,000 (յոթ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արագածոտնի մարզի |

| | | |
|---|---|---|
| | | Քուչակ և Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքների դպրոցները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 19 դեկտեմբերի 2016 թ. – 28 փետրվարի 2017 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է 2016 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2017 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում ռոբոտաշինության երեք խմբակներ հիմնել ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արագածոտնի մարզի Քուչակ և Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքների դպրոցներում: Դպրոցներին տրամադրվելու են ռոբոտաշինության 10-ական հավաքածու:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7,080,000 (յոթ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ռոբոտաշինության 30 հավաքածու է ձեռքբերվելու ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արագածոտնի մարզի Քուչակ և Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքների դպրոցների համար: Յուրաքանչյուր դպրոցին տրամադրվելու է 10-ական հավաքածու: Հավաքածուները ձեռք բերելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մատակարարման պայմանագիր է կնքել «ՍԻ Ի ԹԻ» ՍՊԸ-ի հետ: Մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2017 թվականի փետրվարի 28-ը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7,080,000 (յոթ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արագածոտնի մարզի Քուչակ և Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքների դպրոցների հետ համագործակցելով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ազգային գրասենյակի, Ամասիայի, Ապարանի և Սիսիանի տարածքային գրասենյակների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի, Թայվանի և Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական |



| | | |
|---|---|---|
| | | կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 հունվարի 2017 թվականի N Մ-003-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունվարի 10-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մանկական խաղահրապարակների խաղասարքերը և մարզասարքերը, հիվանդանոցային կահույքն ու պիտույքները (202 տեղ, 8,150 կգ ընդհանուր քաշով, 81,407.92 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 7,136 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2017 թվականի հունվարի 12-ի
N 15/15.6/316-17 ելիցի

17 հունվարի 2017թ.

N 15/15.6/612-17

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 12-ի N Մ-003-Ա որոշման 1-ին կետում «Զվարթնոց» ՄՏ» բառերը փոխարինել «Արարատյան» ՏՄ» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**12 հունվարի 2017 թվականի N Մ-004-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1211-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունվարի 10-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մակարոնային արտադրանքը (2,000 տեղ, 20,400 կգ ընդհանուր քաշով, 43,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս P-D21121601 21.12.2016

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 654 | 1.413 |
| | | | Այգուտ | 138 | 654 | 1.413 |
| | | | Մարտունի | 68 | 322 | 696 |
| | | | Ղպրաքակ | 59 | 280 | 604 |
| | | | Վահան | 172 | 815 | 1.761 |
| | | | Կալավան | 22 | 104 | 225 |
| | | | Բարեպատ | 5 | 24 | 51 |
| | | | Զորավանք | 22 | 104 | 225 |
| | | | Լճաշեն | 46 | 218 | 471 |
| | | | Աղբերք | 43 | 204 | 440 |
| | | | Ճամբարակ | 152 | 720 | 1.556 |
| | | | Անտառամեջ | 12 | 57 | 123 |
| | | | Գավառ | 18 | 85 | 184 |
| | | | Թթուջուր | 128 | 607 | 1.310 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 118 | 256 |
| | | | Գեղակերտ | 57 | 270 | 584 |
| | | | Արտաշար | 50 | 237 | 512 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 47 | 102 |
| | | | Արտաշատ | 17 | 81 | 174 |
| | | | Գետազատ | 14 | 66 | 143 |
| | | | Վարդաշեն | 1 | 5 | 10 |
| | | | Մրգանուշ | 10 | 47 | 102 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 85 | 184 |
| | | | Սևաբերդ | 20 | 95 | 205 |
| | | | Արզական | 50 | 237 | 512 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 142 | 307 |
| | | Արագածոտնի մարզ | Ծաղին | 42 | 199 | 430 |
| | | | Ակունք | 33 | 156 | 338 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 95 | 205 |
| | | Երևան | | 2800 | 13272 | 28.664 |
| | Ընդամենը | | | 4220 | 20000 | 43.200 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* Բ. Զամբազյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հունվարի 2017 թվականի N Մ - 005 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունվարի 17-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի անհատ բարերար Սեյրան Կարապետյանի կողմից (անձնագիր՝ N 71 6049496, տրված՝ 07.09.2011) «Noble Brave Limited» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդանշաններով ժամացույցների (15 տեղ, 78,5 կգ ընդհանուր քաշով, 3,755 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, տեղափոխման արժեքը կազմել է 5,749.80 Հոնկոնգի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հունվարի 2017 թվականի N Մ - 006 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունվարի 17-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Բադեն-Վյուրթենբերգի Հայ համայնքի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված օգտագործված հագուստի,տարբեցների տակդիրների, մակարոնեղենի, ներկերի, հենակների, սայլակների և վիրահատության բժշկական սեղանի (624 տեղ, 13,100 կգ ընդհանուր քաշով, 55,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3,575 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-007-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/795-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1386-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության նախարարության կողմից, որպես անհատույց օժանդակություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հասցեով ուղարկված ռադիոկապի և հարակից սարքավորումների, շարժական տենտգեն սարքերի, սաղավարտների ու հակագազերի (54 տեղ, 4,423 կգ ընդհանուր քաշով, 5,000,000 չինական յուանին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-008-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/801-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1385-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N ԱԲ/22.2/483-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (4 տեղ, 1,771 կգ ընդհանուր քաշով, 42,555.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,662.20 ԱՄՆ-ի դոլար, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2017 թվականի հունվարի 30-ի
N 15/15.6/1672-17 ելիցի

03 փետրվարի 2017թ.

N 15/15.6/[illegible]-17

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-008-Ա որոշման 1-ին կետում «1,662.20 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «1,622.20 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-009-Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 13-ի N 01.1/80-2/318-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/885-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված աթոռների (171 հատ՝ 171 տեղ, 2,394 կգ ընդհանուր քաշով, 39,330 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,884,800 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-010-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՐԱՆՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/799-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1387-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N ԱԲ/22.2/399-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների և պարագաների (64 տեղ, 2,410 կգ ընդհանուր քաշով, 72,320 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,169.90 եվրո, «Սյունիքի» ՏՄ) ու «Renault Master» մակնիշի (2010 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ VF1MAF4CC44342289, 13,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,383.50 եվրո) և «Renault Trafic» մակնիշի (2003 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ VF1FLACA63V167897, 10,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 946.60 եվրո) շտապ օգնության ավտոմեքենաների ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-011-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 01.1/80-2/640-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1388-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզաղաշտի աթոռները (200 հատ՝ 61 տեղ, 2,740 կգ ընդհանուր քաշով, 10,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-012-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 01.1/80-2/29039-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 06/3-8/40490-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2016 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված՝ N 08/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 25 քառ. մետր մարմարե սալիկների մատակարարում՝ 1,292,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2016 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված՝ N 10/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 36.42 քառ. մետր մարմարե սալիկների մատակարարում՝ 1,971,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-013-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1058-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 01.1/80-2/29042-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 06/3-8/40555-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դաշինք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01519996) 2016 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական գործիքների և նյութերի ձեռքբերում՝ 928,416 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-014-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/800-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 18-ի N 06/3-8/1113-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 001520882) «Կարս» մասնաճյուղի հետ 2016 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 25634111 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական ցանցին սպառման համակարգի միացման աշխատանքների իրականացում՝ 1,780,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 001520882) «Կարս» մասնաճյուղի հետ 2016 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 25646111 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական ցանցին սպառման համակարգի միացման աշխատանքների իրականացում՝ 5,164,344.17 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-015-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 01.1/80-2/29034-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 06/3-8/40489-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529594) 2016 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված՝ N 36-Ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության իրականացում՝ 1,210,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-016-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/804-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 18-ի N 06/3-8/1114-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2016 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սպորտային համալիրի կառուցման, հարակից տարածքի բարեկարգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 651,047,365 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-017-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/934-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1392-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 02/14/705-17 և Երևանի քաղաքապետի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/16-86035-Հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 213,600,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ոռոգման համակարգի սարքավորումները (7.44 կգ ընդհանուր քաշով, 1,650.33 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 28.13 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն**
**Մարի Լու Փափազյանի կողմից**
**«24» Հունվարի 2017թ.**

**«Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է շարունակել վերանորոգել, վերակառուցել և պահպանել Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու տարածքը այն դարձնելով հանգստի և ժամանցի գոտի Երևանի քաղաքային համայնքի բնակիչների համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյաններ հիմնադրամի, ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է Երևան քաղաքի Հալաբյան փողոցին հարող Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու տարածքում՝ քաղաքաշինության ոլորտում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 213,600,000 (երկու հարյուր տասներեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017թ-ի հունվարի 1-ից մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝<br>1. Այգու տարածքի լուսավորության իրականացում – 24,000,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>2. "համայնքային այգի" ծրագրի իրականացում – 24,000,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում, |

2

| | | |
|---|---|---|
| | | 3. Այգում աշխատող անձնակազմի աշխատավարձ - 122,400,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>4. Կոմունալ ծառայությունների ձեռք բերում – 12,960,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>5. Այգու ընթացիկ պահպանման ծախսեր – 30,240,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները և ծառայությունները.<br>• Լուսավորության և «Համայնքային այգի» իրականացման նպատակով՝ նյութերի, սարքավորումների, ծառայությունների և իրականացվելիք աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 38,400,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>• Լուսավորության և «Համայնքային այգի» իրականացման նպատակով՝ նյութերի, սարքավորումների, ծառայությունների և իրականացվելիք աշխատանքների ձեռք բերում և ներմուծում արտերկրից – 9,600,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>• Կոմունալ ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 12,960,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>• Այգու ընթացիկ պահպանման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 18,144,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում,<br>• Այգու ընթացիկ պահպանման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից – 12,096,000 դրամ՝ 2017-2019թթ-ի ընթացքում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն կատարվելու: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է Երևան համայնքի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-018-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԹՈՒՄՈ» ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/269-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1376-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 02/14/650-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 03/07-1/16770-16 ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01/11.2/18052-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 2,172,067,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2016 թվականի նոյեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ընթացիկ սպասարկման ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ախուրյանի կոոպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2016 թվականի նոյեմբերի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 9,291,912 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ախուրյանի կոոպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2016 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական



աշխատանքների իրականացում՝ 4,329,655 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00144609) 2016 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N 150716-մ1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում մեդիամոնիտորինգային ծառայությունների մատուցում՝ ամսական 40,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՋիԷՆՍի-Ալֆա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2015 թվականի մայիսի 22-ին կնքված՝ N C0746 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ ամսական 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2014 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ N 042/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տվյալների փոխանցման և ինտերնետին համակցման ծառայությունների մատուցում՝ ամսեկան 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Քլինլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2016 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մաքրարարական աշխատանքների իրականացում՝ ամսական 1,150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 098/01/08/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ ամսական 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Ջի էյ էի քաթինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00866378) 2016 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք լուսային վահանակի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 570,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Զիգզագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500164) 2016 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լվացքի մեքենայի, սառնարանի և ներկառուցվող սալօջախի ձեռքբերում՝ 332,858.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 96,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքո-

իիշյալ ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) ռադիո ստեղնաշարեր՝ մեկ տեղ (16 հատ), 68 կգ ընդհանուր քաշով, 1,264 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 772.10 եվրո, «Զվարթնոց» ՄՏ.

2) դռան մուտքի պլաստմասե քարտեր, ինֆորմացիոն տեխնոլոգիաների գրքեր և գրքի սկաներ՝ 40.89 կգ ընդհանուր քաշով, 1,443.34 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 246.99 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ.

3) «iMac» համակարգիչներ՝ 2 տեղ (11 հատ), 139 կգ ընդհանուր քաշով, 14,379.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 670 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ:

4. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափազյանի կողմից

«27» Հունվարի 2017թ

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ և ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով,<br>• Առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայմանը կոնկրետ ուղղություններով,<br>• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյաններ հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի, Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն հիմնադրամի, ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" և "ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն" ծրագրերի առկա ազատ ռեսուրսները, իրականացնելու է նաև ծրագրից անկախ այլ Հիմնադրամի կանոնադրությանը չհակասող ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացվող զուտ եկամուտը նույնպես ուղղվելու է ծրագրի ֆինանսավորմանը: |

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2,172,067,200 (երկու միլիարդ մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:<br>• Ավագ խմբի 19-26 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող նպատակաուղղված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «Ստեղծագործական Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն» և «ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրերի շարունակությունը, նախատեսվում է իրականացնել ևս 3 տարով՝ հետագայում շարունակելու նպատակով, 2017թ-ի հունվար ամսից մինչև 2019թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել որպես մի քանի զուգահեռ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միտված են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ Ծրագրի կատարողն իրականացնելու է հետևյալ միջոցառումները.<br>• ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում,<br>• նպատակաուղղված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները,<br>• տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը,<br>Երեք տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 2,172,067,200 (երկու միլիարդ մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ որից՝ |



| | | |
|---|---|---|
| | | • Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի (ուսուցանողներ, ուսմանական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -1,345,906,305 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր հինգ) դրամ:<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր – 167,040,000 (մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն քառասուն հազար) դրամ:<br>• Գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 220,262,400 (երկու հարյուր քսան միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) դրամ:<br>• Առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների պահպանման և վերանորոգման ծախսեր (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և շենքային պայմանների պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ) – 18,832,320 (տասնութ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամ:<br>• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 52,112,640 (հիսուներկու միլիոն մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր քառասուն) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 135,360,000 (մեկ հարյուր երեսունհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն.հազար) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 68,031,360 (վաթսունութ միլիոն երեսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր – 14,977,030 (տասնչորս միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար երեսուն) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • 2017-2019թթ-ի ընթացքում 108,288,000 (մեկ հարյուր ութ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 27,072,000 (քսանյոթ միլիոն յոթանասուներկու հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 44,052,480 (քառասունչորս միլիոն հիսուներկու հազար |

| | | |
|---|---|---|
| | | չորս հարյուր ութսուն) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 176,209,920 (մեկ հարյուր յոթանասունվեց միլիոն երկու հարյուր ինը հազար ինը հարյուր քսան) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 3,832,320 (երեք միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների պահպանման, վերանորոգման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 15,000,000 (տասնհինգ միլիոն չորս հարյուր տասնվեց հազար, մեկ հարյուր վաթսուն) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների պահպանման, վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 50,112,000 (հիսուն միլիոն մեկ հարյուր տասներկու հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 116,928,000 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 41,690,112 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար մեկ հարյուր տասներկու) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 10,422,528 (տաս միլիոն չորս հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր քսանութ) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից: |



| | | |
|---|---|---|
| | | • 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Երեք տարվա համար կազմակերպչական ծախսերը կազմում են 216,256,289 (երկու հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր ութսունինը) դրամ, որից՝<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 22,026,240 (քսաներկու միլիոն քսանվեց հազար երկու հարյուր քառասուն) դրամ:<br>• Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 1,883,232 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 20,409,408 (քսան միլիոն չորս հարյուր ինը հազար չորս հարյուր ութ) դրամ:<br>• Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 5,211,264 (հինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 13,536,000 (տասներեք միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 հունվարի 2017 թվականի N Մ-019-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունվարի 27-ին)**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 30-ի N 01.1/80-2/1187-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 26-ի N 06/3-8/2230-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության նախարարության կողմից, որպես անհատույց օժանդակություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասցեով ուղարկված փորձաքրեագիտական սարքավորումների, (3 տեղ, 286 կգ ընդհանուր քաշով, 3,000,000 չինական յուանին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-020-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1138-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 26-ի N 06/3-8/2073-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 26-ի N ՎՀ/22.2/780-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների (22 տեղ, 5,436.7 կգ ընդհանուր քաշով, 143,823.96 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,963.50 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԳՈ ՄԱՆԻՖԵՍՏ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

12 նոյեմբերի 2016թ.

**«Հայաստան-Արցախ» հիմնադրամ**
**Բեռնարկղ 058**
**Direct Relief International #80054358**

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Տեղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC058-01 | 7 | 5321 | 67,183.37 |
| 2. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR SC058-02 | 2 | 719 | 15,246.47 |
| 3. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Ղազարյան Ս. - «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | SC058-03 | 4 | 1881 | 17,316.27 |
| 4. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Մինասյան Ա. – Սբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ | SC058-04 | 2 | 1043 | 13,319.04 |
| 5. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Աղաջանովա Ե. – Մուրացան Էնդոկրինոլոգիական կենտրոն | SC058-05 | 6 | 2584 | 23,783.71 |
| 6. | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ (DRI) | Բժշկական պարագաներ | Սարգսյան Բ. - Հայ օգնության ֆոնդ | SC058-06 | 1 | 440 | 6,975.10 |
| | | | **Ընդամենը** | | 22 | 11,988 | 143,823.96 |
| | | | **Փոխադրման ծախսեր** | | | | 8,963.50 |
| | | | **Ընդամենը** | | | | 152,787.46 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-021-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/919-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1479-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 1/06/44-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ֆուտբոլի ազգային հավաքականների համար ուղարկված գնդակների (30 հատ՝ 3 տեղ, 23.9 կգ ընդհանուր քաշով, 1,060.20 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-022-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/968-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 23-ի N 06/3-8/1504-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 1/06/58-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի բասկետբոլի ֆեդերացիաների միջազգային ասոցիացիայի (FIBA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բասկետբոլի գնդակների (720 հատ՝ մեկ տեղ, 400 կգ ընդհանուր քաշով, 1,440 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2017 թվականի N Մ-023-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1211-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/950-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1481-17 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N ՖԲ/ԱՆՄ-2-1/582-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված տոնատի մածուկը (1,855 տեղ, 20,412.42 կգ ընդհանուր քաշով, 39,974.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

հիվորս P-D10011701 10.01.2017

## Բեռի բաշխման ցանկ

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տոմատի մածուկ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 582 | 1.307 |
| | | | Այգուտ | 138 | 582 | 1.307 |
| | | | Մարտունի | 68 | 287 | 644 |
| | | | Դպրաբակ | 59 | 249 | 559 |
| | | | Վահան | 172 | 726 | 1.629 |
| | | | Կալավան | 22 | 93 | 208 |
| | | | Բարեպատ | 5 | 21 | 47 |
| | | | Ձորավանք | 22 | 93 | 208 |
| | | | Լճաշեն | 46 | 194 | 436 |
| | | | Աղբերք | 43 | 181 | 407 |
| | | | Ճամբարակ | 152 | 641 | 1.440 |
| | | | Անտառամեջ | 12 | 51 | 114 |
| | | | Գավառ | 18 | 76 | 170 |
| | | | Թթուջուր | 128 | 540 | 1.212 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 106 | 237 |
| | | | Գեղակերտ | 57 | 241 | 540 |
| | | | Արտաշար | 50 | 211 | 474 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 42 | 95 |
| | | | Արտաշատ | 17 | 72 | 161 |
| | | | Գետազատ | 14 | 59 | 133 |
| | | | Վարդաշեն | 1 | 4 | 9 |
| | | | Մրգանուշ | 10 | 42 | 95 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 76 | 170 |
| | | | Սևաբերդ | 20 | 84 | 189 |
| | | | Աբովյան | 50 | 211 | 474 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 127 | 284 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 177 | 398 |
| | | | Ակունք | 33 | 139 | 313 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 84 | 189 |
| | | Երևան | | 2800 | 11817 | 26.522 |
| | Ընդամենը | | | 4220 | 17808 | 39.974 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝

ար-1/9.1Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-024-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1140-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 25-ի N 06/3-8/1920-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N 10148 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արաքս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 000869 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի մայիսի 16-ին կնքված՝ N 000137 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 390621 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 018.08.13.2952 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 03308134962 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Արագածոտնի ԳԳՄի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N 131111611233 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 112750683 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 113293923 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 40,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2015 թվականի մայիսի 29-ին կնքված՝ N 17888838 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում՝ 70,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2015 թվականի հուլիսի 3-ին կնքված՝ N 17962428 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2016 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 03-009-57/5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 40,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2016 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N 3370741 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ընթացքում շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Ջեթ Իքս գարաժ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02701398) 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվադողերի ձեռքբերում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Պիկո-վիկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871025) 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային պարագաների և գրենական պիտույքների ձեռքբերում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ ամսական 50,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Խաս-Խազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01546394) 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գործիքների, տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարում՝ 3,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

18) «Սոլոմոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02558239) 2017 թվականի հունվարի 13-ին կնքված՝ N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, հարակից սարքավորումների, ծրագրերի, պարագաների և պիտույքների ձեռքբերում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

19) «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2017 թվականի հունվարի 16-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների, ցանցային և հարակից սարքերի, բաղադրամասերի ու պարագաների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



20) «ԱՌԴ Գլոբալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533008) 2017 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է այցեքարտերի, ցուցատախտակների, պաստառների, պիտակների և այլ պարագաների պատրաստում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

21) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2017 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատճենահանող մեքենաների, տպող սարքերի, քարթրջների լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

22) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2017 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N J08-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարաներով խմելու ջրի մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

23) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2017 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N R01-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու դիսպենսեր սարքավորման վարձակալում՝ 60,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-025-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1145-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 26-ի N 06/3-8/2070-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2017 թվականի հունվարի 20-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա և 2016 թվականի մարտի 18-ի N Մ-211-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2016 թվականի» բառերը փոխարինել «2017 թվականի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 026 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այք» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունվարի 25-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է**.*

1. Սահմանել, որ «Այք» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված վարդակները և անջատիչները (6 տեղ, 74.75 կգ ընդհանուր քաշով, 7,954.7 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այք» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այք» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 027 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1137-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 25-ի N ՎՀ/22.2/706-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 24-ի N 06/3-8/1873-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «Հայկական միություն» կազմակերպության կողմից «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բժշկական բազմաֆունկցիոնալ աթոռի (2 հատ, 218 կգ ընդհանուր քաշով, 400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության գրասենյակում բժշկական սենյակի կահավորման համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 028 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 13-ի N 01.1/80-2/-352-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/884-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Սինգապուրի Հանարպետությանից անհատ բարերար Աշոտ Թունյանի կողմից, արևային ջրատաքացուցիչների կայանի համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված արևային վահանակների (120 տեղ, 85,865.1 կգ ընդհանուր քաշով, 353,280.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 17,375 ԱՄՆ-ի դոլոր, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 029 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/803-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1393-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2016 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտ ուսումնասիրության իրականացում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հունվարի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռք բերում՝ 930,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 030 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 01.1/80-2/28821-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 06/3-8/40554-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ 01005235) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հարմարվողականության փոքր ծրագրերի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջինջ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02511015) 2016 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N ԱՋԳ-Ջ/16-01 (2016 թվականի դեկտեմբերի 12-ի լրացում N 01) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բասեն գյուղի ջրամատակարարման արտաքին համակարգում ջրատարի վերակառուցվող հատվածի և կառուցվող քլորակայանի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 031 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 12-ի N 01.1/80-2/263-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/883-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2017 թվականի հունվարի 9-ի գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի Մ-1003-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա և դեկտեմբերի 25-ի Մ-1450-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում (2015 թվականի դեկտեմբերի 25-ի Մ-1450-Ա որոշման խմբագրությամբ) «2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 30, տևողությունը՝ 39.5 ամիս» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում (2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա որոշման խմբագրությամբ) «2015 թվականի դեկտեմբերին» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 032 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-ի N Մ-771-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/929-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1307-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի հունվարի 12-ի N 08 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Աշտարակի Գուլամերյան հայորդյաց տան նորոգում» ծրագրի մասին» N Մ-771-Ա (2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-885-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «253,722,410 դրամ» բառերը փոխարինել «270,950,230 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «20 դեկտեմբեր 2016թ.» բառերը փոխարինել «31 մայիս 2017թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 033 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-798-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/914-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1306-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի հունվարի 12-ի N 07 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վերելակների սպասարկման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-798-Ա (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1236-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-130-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 034 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1268-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/928-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1304-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի հունվարի 12-ի N 09 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-1268-Ա (2016 թվականի օգոստոսի 8-ի N Մ-732-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հունիսի 10-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 035 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/949-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 02/14/704-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1305-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 60,000,000 դրամ արժողությամբ «Սևանի Վազգենյան դպրանոցի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա») ՓԲԸ-ի Սևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 12108138204 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի ծառայությունների մատուցում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի;

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br>
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ<br>
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ<br>
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆ<br>
«17» հունվար 2017 թ.

Սևանի Վազգենյան դպրանոցի տնտեսական պայմանների բարելավում

ԾՐԱԳԻՐ

գր. 1/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել դպրանոցի տնտեսական պայմանները, առավել բարենպաստ դարձնելով սաների կենցաղային և ուսումնակրթական մակարդակը՝ նպաստելով ուսյալ և լուսամիտ հոգևոր սպասավորների կրթությանը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևանի թերակղզի, ուսումնակրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 60 000 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սևանի Վազգենյան Դպրանոցի սաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2017թ. – 31 դեկտեմբերի 2019թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են մոտ 92 սաներ կրթող Սևանի Վազգենյան դպրանոցն ապահովել բնական գազով և էլեկտրաէներգիայով՝ 60 000 000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2017թ. – 31 դեկտեմբերի 2019թ.:<br><br>Նախատեսվում է<br><br>գազի մատակարարում՝ 30,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, որից 2017թ. – 10,000,000 դրամ, 2018թ. – 10,000,000 դրամ, 2019թ. – 10,000,000 դրամ, պայմանագիր N 12108138204՝ կնքված 01.08.2013 թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ»(Գազպրոմ Արմենիա) ՓԲԸ (ՀՎՀՀ 00046317) Սևանի ԳԳՄ-ի միջև:<br><br>էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 30,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, որից 2017թ. – 10,000,000 դրամ, 2018թ. – 10,000,000 դրամ, 2019թ. – 10,000,000 դրամ, պայմանագիր թիվ ԿՊ0054, կնքված 10.09.2013թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի միջև, քարտի համարը՝ 510000000078, «Գեղամա» մասնաճյուղ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել մոտ 30,000,000 դրամի գազ, 30,000,000 դրամի էլեկտրաէներգիա, ընդամենը 60,000,000 ՀՀ դրամով, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Սևանի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

գր. 1/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 036 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1146-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 25-ի N 06/3-8/1921-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի 2017 թվականի հունվարի 20-ի գրությունը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերում «Աուդիտորական ծախսեր» բառերից հետո լրացնել «2016-2020թթ.» բառերը:

2. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներ անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի հուլիսի 25-ին կնքված N 09106149959 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 2,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի օգոստոսի 9-ին կնքված՝ N 014606 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N 99/23/08/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Գրանտ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2016 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N AT-AU-100-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի իրականացում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Կլասիկ Պարտներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07613913) 2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 14-ը ընկած ժամանակահատվածում 10.0 (տաս) հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալություն՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04102865) 2017 թվականի հունվարի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անասնակերի մատակարարում՝ 56,396,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ-037- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-330-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-458-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N 01.1/80-2/534-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/889-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես մարդասիրական օգնություն ամերիկահայ բարերար Սեթա Ղազարյանի կողմից ուղարկված բեռը (501 տուփ, 11,247 կգ (24,795 LBS) քաշով, 115,592 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,000 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բեռի բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-330-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1193-Ա որոշման խմբագրությամբ) և 2013 թվականի հունիսի 7-ի «Հույսի ճրագ» բարեգործական ծրագրի մասին» N Մ-458-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի N Մ-592-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (39,423.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 2,050 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 76,168.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 3,950 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-458-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

501 տեղ/արկղ

| | | Մանկական հագուստ | Կանացի հագուստ | Տղամարդու հագուստ | Խառը հագուստ, ջինս, ջակետ | Վերմակ, բարձ | Խոհանոցային պարագաներ | Մեծահասակի և մանկական տակդիրներ | Խաղալիք, հեծանիվ | Պայուսակ և ուս. պարագաներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | |
| | **«ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ** | | | | | | | | | | |
| | **ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ** | | | | | | | | | | |
| 1. | Գ. Պտղունքի մանկապարտեզ | 14արկղ $2038,4 | | | | | 3արկղ $477 | | | | 17արկղ $2515,4 |
| 2. | Գ. Պտղունքի սոց. անապահով ընտանիքներ/ 40 / | 20արկղ $2912 | 4արկղ $1761,2 | 1արկղ $414,3 | 1արկղ $402,3 | | | | | | 26արկղ $5489,8 |
| 3. | Գ. Շահումյան /100 ընտանիք/ | 27արկղ $3931,2 | 7արկղ $3082,4 | 4արկղ $1659 | 4արկղ $1610,9 | 2արկղ $408,8 | | | | | 44արկղ $10692,3 |
| | **ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ** | | | | | | | | | | |
| 4. | Գ. Ղազարավան/ 45 ընտանիք/ | 16արկղ $2329,6 | 4արկղ $1761,2 | 1արկղ $414,3 | 1արկղ $402,3 | | | | | | 22արկղ $4907,4 |
| 5. | ք. Թալին / 90 ընտանիք/ | 25արկղ $3640 | 5արկղ $2201,5 | 3արկղ $1242,9 | 3արկղ $1206,9 | 2արկղ $408,8 | | | | | 38արկղ $8700,1 |
| 6. | Գ. Բազմաղբյուր /91 ընտանիք/ | 26արկղ $3785,6 | 4արկղ $1761,2 | 3արկղ $1242,9 | 3արկղ $1206,9 | 2արկղ $408,8 | | | | | 38արկղ $8405,4 |

1/6. 2ն

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7. | Գ. Փարպի /90 ընտանիք/ | 25արկղ $3640 | 5արկղ $2201,5 | 3արկղ $1242,9 | 3արկղ $1206,9 | 2արկղ $408,8 | | | | | 38արկղ $8700,1 |
| 8. | [illegible] ովքեր ամենամսյա "Դրամական օժանդակություն" են ստանում հիմնադրամում (50 ընտանիք) | 20արկղ $2912 | 2արկղ $880,6 | 2արկղ $828,6 | 2արկղ $804,6 | 2արկղ $408,8 | | 4արկղ $2453,6 | | 1արկղ $338 | 33արկղ $8626,2 |
| 9. | Ֆիզ անձեր. սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | 32արկղ $4659,2 | 2արկղ $880,6 | 2արկղ $828,6 | 2արկղ $804,6 | 1արկղ $204,4 | 4արկղ $636 | 6արկղ $3680,4 | | 1արկղ $338 | 50արկղ $12031,8 |
| 10. | Հիմնադրամի գրասենյակ | | | | | | | | | | |
| | «ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | | |
| 11. | <<ՄԱՅՐԱՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | 79արկղ $11519,4 | 8արկղ $3524 | | | 4արկղ $819 | 3արկղ $477 | 19արկղ $11666 | 6արկղ $1490 | 3արկղ $1014 | 122արկղ $30509,4 |
| 12. | <<Պեսակ մը կերակուր>> (30 միայնակ ծերերի 5 տարբեր գյուղերից հյուրասիրություն և նվերների բաշխում | | 4արկղ $1761,2 | 3արկղ $1242,9 | 1արկղ $402,3 | 2արկղ $408,8 | | | | | 10արկղ $3815,2 |
| 13. | <<Աստվածաշնչի ուսումնասիրություն>> քահանայի կողմից; 60-70 հոգանոց լսարանի մասնակիցներին նվերների բաշխում | 6արկղ $873,6 | 2արկղ $880,6 | 2արկղ $828,6 | 1արկղ $402,3 | 2արկղ $408,8 | | | | | 13արկղ $3393,9 |

| | | Ատամի մածուկ, օճառ | Կար ու ձևի պարագաներ | Նոր կոշիկ | Մանկական օրորոց և մատրաս | Մահճակալի շրջ., բժ. Մահճակալ/մատ 1-6/, մատրաս | Պահարան, քաղցրավենիքների կոմպլ | Աթոռ, բազկաթոռ, սեղան, գորգ | Քայլակ, սայլակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | |
| | «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | |
| | ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ | | | | | | | | | |
| 1. | Էջմիածնի հիվանդանոց | | | | | 22արկղ $2250 | | | | 22արկղ $2250 |
| 2. | Ֆիզ անձեր. սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | | | | | | | | 3արկղ $275 | 3արկղ $ 275 |
| 3. | Հիմնադրամի գրասենյակ | | 2արկղ $245 | | 2արկղ $280 | | 3արկղ $245 | 13արկղ $2805 | | 20արկղ $3575 |
| | «ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | |
| 4. | <<ՄԱՅՐԱՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | 3արկղ $1245 | | | | | | | | 3արկղ $1245 |
| 5. | <<Պեսակ մը կերակուր>> (30 միայնակ ծերերի 5 տարբեր գյուղերից հյուրասիրություն և նվերների բաշխում | | | 2արկղ $460 | | | | | | 2արկղ $460 |

| | | |
|---|---|---|
| «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 351<br>ԱՐԺԵՔ՝ $ 76168,5<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 3950 | «ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 150<br>ԱՐԺԵՔ՝ $ 39423,5<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 2050 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ արկղ 501<br>ԱՐԺԵՔ $ 115,592<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 6000 |

Տնօրենի տեղակալ Ն.Մեսրոպյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**01 փետրվարի 2017 թվականի N Մ-038- Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունվարի 27-ին)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-330-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-458-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)

(«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի հունվարի 31-ի N 07 ու փետրվարի 1-ի N 08 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N 01.1/80-2/532-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/880-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես մարդասիրական օգնություն ամերիկահայ բարերար Սեթա Ղազարյանի կողմից ուղարկված բեռը (339 արկղ, 11 պալետ, 10,938 կգ (24,065 LBS) քաշով, 155,484 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,700 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բեռի բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-330-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1193-Ա որոշման խմբագրությամբ) և 2013 թվականի հունիսի 7-ի «Հույսի ճրագ» բարեգործական ծրագրի մասին» N Մ-458-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի N Մ-592-Ա որոշման |սմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (32, 969.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 1,550 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 122,514.5 ԱՄՆ-ի դոլարին



համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 4,150 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-458-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն,Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ / բեռի բաշխման ցանկ

324 տեղ/արկղ

| | | Կանացի հագուստ | Տղամարդու հագուստ | Մանկական հագուստ | Խառը հագուստ(Վերնաշապիկ, ջակետ) | Վերմակ և անկողնային պարագաներ | Մանկական և մեծահասակի ոտնամաններ | Խաղալիք,մանկական սեղան և կահավորանք | Խոհանոցային պարագաներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | |
| | **«ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ** | | | | | | | | | |
| | **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ** | | | | | | | | | |
| 1. | Գ. Ծովազարդ /90 ընտանիք/ | 2 արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 12արկղ $4184,4 | 11արկղ $10382,9 | 1արկղ $672,9 | | | | 28 արկղ $16656,5 |
| 2. | Գ. Նորատուս /76 ընտանիք/ | 2արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 11արկղ $3835,7 | 10արկղ $9439 | 1արկղ $672,9 | | | | 26արկղ $15363,9 |
| | **ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ** | | | | | | | | | |
| 3. | գ. Ձորագլուխ /75 ընտանիք/ | 2արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 11արկղ $3835,7 | 10արկղ $9439 | 1արկղ $672,9 | | | | 26արկղ $15363,9 |
| 4. | Գ. Նոր Ամանոս /77 ընտանիք/ | 2արկղ $598,4 | 2արկղ $817,8 | 11արկղ $3835,7 | 10արկղ $9439 | 1արկղ $672,9 | | | | 26արկղ $15363,8 |
| | **ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ** | | | | | | | | | |
| 5. | Գ. Հացիկ /80 ընտանիք/ | 2արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 11արկղ $3835,7 | 10արկղ $9439 | 1արկղ $672,9 | | | | 26արկղ $15363,9 |
| 6. | Գ. Շիրակ /70 ընտանիք/ | 2արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 11արկղ $3835,7 | 10արկղ $9439 | 1արկղ $672,9 | | | | 26արկղ $15363,9 |
| 7. | Սիրիահայ փախստական ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | 2արկղ $598,4 | 2արկղ $817,9 | 5արկղ $1743,5 | 7արկղ $6612,6 | 5արկղ $3364,9 | 3արկղ $1054,5 | | 11արկղ $2546 | 35 արկղ $16737,8 |
| 8. | Հիմնադրամի շահառուներ, ովքեր ամենամսյա "Դրամական օժանդակություն" են ստանում հիմնադրամում (50 ընտանիք) | | 1արկղ $408,9 | 2արկղ $697,4 | 1արկղ $943,9 | | 1արկղ $351,5 | | | 5արկղ $2401,7 |
| 9. | Ֆիզ անձեր. սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | | 1արկղ $408,9 | 2արկղ $697,4 | 2արկղ $1887,8 | | 5արկղ $1757,5 | | | 10 արկղ $ 4751,6 |
| 10. | Հիմնադրամի գրասենյակ | | | | | | | | | |
| | **«ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ** | | | | | | | | | |
| 11. | <<ՄԱՅՐԱՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | 19 արկղ $1198,2 | | 19արկղ $6626,8 | | 13արկղ $8747,7 | 27արկղ 11 պալետ $6759.5 | 13արկղ $3620 | | 91 արկղ, 11 պալետ $26952.2 |
| 12. | <<Պնակ մը կերակուր>> (30 միայնակ ծերերի 5 տարբեր գյուղերից հյուրասիրություն և նվերների բաշխում | | | | 1արկղ $943,9 | | | | | 1արկղ $943,9 |
| 13. | <<Աստվածաշնչի ուսումնասիրություն>> քահանայի կողմից; 60-70 հոգանոց լսարանի մասնակիցներին նվերների բաշխում | | | | 1արկղ $943,9 | | | | | 1արկղ $943,9 |

| | | Սայլակ ,հենակ | Գրենական պարագաներ, կայունակ | Բժշկական պարագաներ և խտորոա | Գործիքների տուփ և փախանակներ | Նոր կոշիկ | Գորգ | Օծառ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | |
| | «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | |
| 1. | Սիրիահայ փախստական ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | | 1արկղ $249,5 | | | 1արկղ $518 | | | 2արկղ $767,5 |
| 2. | Հիմնադրամի շահառուներ, ովքեր ամենամյա "Դրամական օժանդակություն" են ստանում հիմնադրամում (50 ընտանիք) | | 1արկղ $249,5 | 3արկղ $ 540 | | 1արկղ $518 | | | 5արկղ $1307,5 |
| 3. | Ֆիզ անձեր. սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ նամակով՝ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | 6արկղ $1400 | 1արկղ $249,5 | 3արկղ $540 | | 1արկղ $518 | | | 11արկղ $2707,5 |
| 4. | Հիմնադրամի գրասենյակ | | | | 3արկղ $265 | | 1արկղ $100 | | 4արկղ $365 |
| | «ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | |
| 5. | <<ՄԱՅՐԱՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | | 6արկղ $1497,5 | 7արկղ $1260 | | 2արկղ $1036 | | 1արկղ $336 | 16արկղ $4129,5 |

| | | |
|---|---|---|
| «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 230<br>ԱՐԺԵՔ՝ $ 122514,5<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 4150 | «ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 109<br>ՊԱԼԵՏ՝ 11<br>ԱՐԺԵՔ՝$ 32969.5<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 1550 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ արկղ 339<br>Պալետ 11<br>ԱՐԺԵՔ $ 155.484<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 5700 |

Տնօրենի տեղակալ Ն.Մեսրոպյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ-039- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 13-ի N 01.1/80-2/317-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 11-ի N ԱԲ/22.2/84-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/886-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (ստերիլ վիրահատական ձեռնոց՝ 1 արկղ, 6 կգ քաշով, 211.32 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 242.94 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-040-Ա**

**«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 11-ի N 01.1/80-2/212-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 02/14/17355-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N ՖԲ/ԱնՄ-1-2/12586-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԲ/22.2/14363-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 03/07-1/16722-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/39490-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 24/3268-16 և Երևանի քաղաքապետի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/34-85951h-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2017 թվականին իրականացվող՝ 114,167,218 դրամ ընդհանուր արժեքով, «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2015 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N 07-0012-6-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 012.12.15. 0546 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N Ե-243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 12-ից մինչև 2018 թվականի հունվարի 12-ն ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազապատման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 69,718 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2016 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N AT-AU-052-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N AR 071215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 20,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Ֆարինի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061455) 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 1/12-15 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է

2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում թխվածքաբլիթի և գաթայի մատակարարում՝ 1,206,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 116/14 պայմանագրում և 2015 թվականի դեկտեմբերի 7-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բենզինի գնում՝ 2,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպության
տնօրեն Արմենուհի Հովհաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին

2017 թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը, |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/,»Հույսի կամուրջ» ՀԿ, Ցիրիկյան ընդանիք,Հակոբ Բարսեղյան |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Երևան<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 114,167,218 (հարյուր տասնչորս միլիոն հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր տասնութ) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծերերով:<br>Այժմ ծրագրում ներգրավված են.<br>• 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 53 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: |

1/3

| | | |
|---|---|---|
| | | Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը,բուժքույր եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն", Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի » հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2017թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 100 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 53 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br>• 100 երեխայի և 53 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 35,391,704 դրամ (մթերքի ձեռք բերում՝ 24,566,000 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 1,800,000 դրամ, աշխատավարձ խոհանոցի աշխատողներին՝ 9,025,704 դրամ)<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 2889494 դրամ (բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ՝ 452,642 դրամ, բուժքրոջ և հոգեբանի աշխատավարձ՝ 2,436,852 դրամ)<br>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 6,613,724 դրամ (հագուստի և կոշիկի ձեռք բերում՝ 3,200,000 դրամ, սոց. աշխատողի աշխատավարձ՝ 3,413,724 դրամ)<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 11,797,775 դրամ (ամառային ճամբար, այցելություն Ջրաշխարհ, թատրոն, կինո՝ 6,955,223 դրամ, մշակութային աշխատողների աշխատավարձ՝ 4,842,552)<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր 100 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարվեստական հինգ կենտրոններում ուսուցում (Փայտամշակում, ասեղնագործություն-մաքրամե, կավագործություն, նկարչություն, բացիկների |



| | | |
|---|---|---|
| | | պատրաստում)- տարեկան 17,306,059 դրամ-(դպրոցական գրենական պիտույքներ, պայուսակներ՝ 3,500,000 դրամ, նյութեր՝ ձեռարվեստական հինգ կենտրոնի համար՝ 2047451 դրամ, աշխատավարձ ուսուցիչներն՝ 11,758,608 դրամ)<br>• արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք, սպորտային ապրանք)– տարեկան 4,000,000 դրամ<br>• նվիրատվություն.<br>- ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 5,500,000 դրամ,<br>- 90 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 5,616,000 դրամ,<br>- 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ,շախմատ և այլն) ուսման վարձերի վճարում - տարեկան 1,260,000 դրամ;<br>• «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով՝ 4,200,000 դրամ<br>-<br>Ընդամենը 94574756 դրամ (իննսունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր հիսունվեց ) ,Կազմակերպչական ծախսերը՝ 19592462 դրամ , ընդամենը ծրագրի բյուջեն՝ 114,167,218 դրամ |

| | | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրութ-յունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1 | 17.06.04 | N010309530 51/3162/4682 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,600,000 |
| | | 2 | 27.11.15 | N 07-0012-6-1 | Երևանի «Ջրմուղ Կոյուղի» | Խմելու ջրի մատակարարում | 300,000 |
| | | 3 | 14.08.08 | N-263135 | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ | էլեկտրաէներգիայի մատակարարում | 1,800,000 |
| | | 4 | | | ԱՁ «Արսեն Խալաթյան» | Հացի ձեռք բերում | 3,000,000 |
| | | 5 | 01.12.15 | Պայմանագիր N 012.12.15.0546 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) | 4,000,000 |
| 7 | 12.12.16 | Ե-243 | "էյ-Ի-Ջի-Սերվիս" ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում | 69,718 |
| 8 | 29.06.16 | AT-AU-052-16 | "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ | Տարեկան ֆինանսական աուդիտի ծառայություն մատուցում | 1,500,000 |
| 9 | 07.12.15 | Պայմանագրի AR 071215 | "ՍԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Մթերքի ձեռք բերում | 20,000,000 |
| 10 | | | | | |
| 11 | | | | փոստային ծախսեր | 180,000 |
| | | | | գրասենյակային ծախսեր | 1,836,000 |
| 12 | | | Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ | Գազի կաթսայի տեխնիկական զննման ծառայություն մատուցում | 100,000 |
| 13 | | | "Վալենսիա" ՀՁ ՍՊԸ | Երեխաների այցելություն Ջրաշխարհ ( 90 եր*6000դր) | 540,000 |
| 14 | | | "Ռիպպ" առողջարան ՍՊԸ | Երեխաների հանգիստ "Ռիպպ" առողջարանում (70եր*7 օր*8000 դր) | 3,360,000 |
| 15 | 16.12.10 | 74556 | "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,200,000 |
| 16 | 11.12.15 | 1/12-15 | "Ֆարինի" ՍՊԸ | Թխվածքաբլիթների, զաթայի ձեռք բերում | 1,206,000 |
| 17 | | | | Դպրոցական գրենական պիտույքներ,պայուսակներ | 3,500,000 |
| 18 | 10.12.14 | Պայմանագիր N116/14,համաձայնագիր առ 07.12.15 | "Ֆլեշ"ՍՊԸ | Բենզինի ձեռք բերում | 2,700,000 |
| 19 | | | Արմենիա Հյուրանոցային Համալիր ՓԲԸ | Միջոցառում՝ դրամական միջոցների հայթայթման նպատակով | 4,200,000 |

1/3



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | | | | խոհանոցային սարքավորումների ձեռք բերում | 1000000 |
| 21 | | | | խոհանոցային պարագաների ձեռք բերում | 800000 |
| 22 | | | ՛Նաիրա Աղավելյան՛Ա.Ձ | Սենդվիչի ձեռք բերում | 360000 |
| 23 | | | | Կոշիկի, հագուստի ձեռք բերում | 3,200,000 |
| 24 | | | | ծեռարվեստական հինգ կենտրոնի համար նյութերի ձեռք բերում | 2,047,451 |
| 25 | | | | բժշկական- սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ՝ | 452642 |
| 26 | | | | մշակութային միջոցառումներ այցելություն մշակութային հաստատություններ, նյութերի ձեռք բերում | 3055223 |
| | | Ընդամենը | | | 65,207,034 |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «Գազպրոմ Արմենիա, «ԱրմենՏել»-ի, "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ ,«Հայաստանի էլեկտրական Ցանցեր», Երևանի «Ջրմուղ Կոյուղի» ընկերությունների հետ:<br>• գազ -տարեկան՝ 3,200,000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 69718 դրամ<br>• ջուր՝ - 300,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ 1,800,000 դրամ<br>• հեռախոս՝ 2,800,000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր՝ 1,836,000 դրամ<br>• ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՓԲԸ-ի կողմից՝ 1,500,000 դրամ<br>• փոստային ծախսեր՝ 180,000 դրամ<br>• բենզինի ծախսեր՝ 2,700,000 դրամ<br>• տեխնիկական անվտանգություն՝ 100000 դրամ |

1/3

| | | |
|---|---|---|
| | | • Աշխատավարձ վարչական աշխատողներին՝ 5106744 դրամ<br><br>Ընդամենը՝ 19,592,462 (տասնինը միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր վաթսուներկու) դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3.ՀՀ առողջապահության նախարարություն<br>4.ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5.Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ<br>6.Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7.«ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն »<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• ամսեկան հաշվետվություններ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՓԲԸ կողմից |

*Ծրագրի ղեկավար՝* [signature] *Արմենուհի Հովհաննիսյան*

1/3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ-041-Ա**

## «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 12-ի N 01.1/80-2/207-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 02/14/17354-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N ՖԲ/ԱնՄ-1-2/12578-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱԱ/22.2/14398-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 03/07-1/16721-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 06/3-8/39889-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 24/3267-16, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 101/104.3.2/6122-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2017 թվականին իրականացվող՝ 66,997,557 դրամ ընդհանուր արժեքով, «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Հյուսիսային տարածքի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի փետրվարի 6-ին կնքված՝ N 117345015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 03108134796 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06934743) 2013 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 218150806 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 000502 պայմանագրում և 2015 թվականի սեպտեմբերի 24-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում, 1,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N 4-293 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 12-ից մինչև 2018 թվականի հունվարի 12-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազապայտման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 106,557 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Սպարապետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06915002) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N V -001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 19,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մխիթար Սիմոնյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 86035603) 2015 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N 3/12-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հացամթերքի մատակարարում՝ 5,513,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-

գրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1

Հաստատում եմ՝
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Արմինե Հովհաննիսյան

2017թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ՕՐՐԱՆ-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին»

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական ծանր կացությունում հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին: |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| | Բարեգործը (բարեգործները) | Միավորված Ազգերի Կազմակերպության Հայաստանյան գրասենյակ (ՄԱԿ), ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Սերժ Թանկյան (ԱՄՆ), Ակիյան ընտանիք. |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 66,997,557 (վաթսունվեց միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | • 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 25 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր աշխատում են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անճառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: |

1/4

| | | |
|---|---|---|
| | | Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության" Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ « ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն» հետ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսել է 2009թ. հոկտեմբերից և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2017թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:այն շարունակական է: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Վանաձոր Տիգրան Մեծ 4ա հասցեում գտնվող կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 100 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 25 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br><br>• 100 երեխայի և 25 թոշակառուի ամենօրյա սնունդ, նաև խոհանոցային սարքավորում և պարագաներ - տարեկան կազմում է 30,767,485 դրամ (մթերքի ձեռք բերում՝ 24,513,250 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 1,800,000 դրամ, աշխատավարձ խոհանոցի աշխատողներին՝ 4,454,235 դրամ)<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 3,413,654 դրամ (բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ՝ 562974 դրամ, բուժքրոջ և հոգեբանի աշխատավարձ՝ 2,850,680 դրամ)<br>• սոցիալական ծարայություն,հագուստ և կոշիկ - տարեկան 5,296,178 դրամ (ձմեռային կոշիկ և հագուստ՝ 3,200,000 դրամ , սոց.աշխատողի աշխատավարձ՝ 2096178 դրամ)<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 600,000 դրամ (մշակութային աշխատողների աշխատավարձ՝ 396,828 դրամ, մշակութային պարագաներ՝ 203172 դրամ )<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 79 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, |



| | | |
|---|---|---|
| | | պայուսակների ապահովում, - տարեկան 4,996,593 դրամ (գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ձեռքբերում՝ 556,000 դրամ, աշխատավարձ ուսուցիչներին՝ 4,440,593 դրամ)<br>• ձեռարվեստի խմբակներ՝ մաքրամե, փայտամշակում, կավագործություն՝ տարեկան 3,202,890 դրամ (նյութեր՝ ձեռարվեստական կենտրոնի համար՝ 360,000 դրամ,՝ աշխատավարձ ուսուցիչներին՝ 2,842,890 դրամ )<br>• 96 երեխաների և 20 թոշակառուի ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան՝ 8,299,200 դրամ<br>• արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված նվերներ, գրենական պիտույքներ, խաղալիք)– տարեկան՝ 3,000,000 դրամ<br>Ընդամենը 59,576,000 (հիսունինը միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:<br>Կազմակերպչական ծախսերը՝ 7,421,557 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն՝ 66,997,557 դրամ: |
| 10 | 6 | |

| N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 06.02.13 | 117345015 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոսային, ինտերնետային կապի մատակարարում | 600,000 |
| 2 | 01.04.2014 | 03108134796 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |
| 3 | 22.11.13 | 218150806 | «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ | Խմելու ջրի մատակարարում | 180,000 |
| 4 | 25.03.11 | Պայմանագիր 000502, համաձայնագիր առ 24.09.15 | « Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ "Դեբեդ" մ/ճ (Վանաձոր էլ.ցանց) | էլեկտրա էներգիայի մատակարարում | 1,700,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 5 | 12.12.16 | 4-293 | “Էյ Ի Ջի Սերվիս” ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում | 106557 |
| | | 6 | 11.12.2014 | V-001 | «Սպարապետ» ՍՊԸ | Մթերքի ձեռքբերում | 19,000,000 |
| | | 7 | 15.12.15 | 3/12-15 | “Մխիթար Սիմոնյան” ԱՁ | Հացի ձեռքբերում | 5,513,250 |
| | | 8 | | | | Բենզինի ձեռքբերում | 200,000 |
| | | 9 | | | | Գրենական պիտույքների, դպրոցական պայուսակների ձեռքբերում | 556,000 |
| | | 10 | | | | Ձմեռային կոշիկների ձեռքբերում | 790,000 |
| | | 11 | | | | Ճեռարվեստական կենտրոնների համար նյութերի ձեռքբերում | 360,000 |
| | | 12 | | | | գրասենյակային ծախսեր | 435,000 |
| | | 13 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) | 3,000,000 |

1/4



| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 14 | | | Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ | Գազի կաթսային տեխնիկական զննման ծառայության մատուցում | 70000 |
| | | 15 | | | | խոհանոցային սարքավորումների ձեռքբերում | 1000000 |
| | | 16 | | | | խոհանոցային պարագաների ձեռք բերում | 800000 |
| | | 17 | | | | Ձմերային հագուստի ձեռքբերում | 2410000 |
| | | 18 | | | | բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում | 562974 |
| | | 19 | | | | մշակութային պարագաների ձեռքբերում | 203172 |
| | | | | | | Ընդամենը | 40686953 |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ԱրմենՏել»-ի, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր», “Լոռի-Ջրմուղկոյուղ” ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ընկերությունների, ինչպես նաև Վանաձոր քաղաքի «Օրրան» շենքի կահույքի պատվիրման և սարքավորումների գնման պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ:<br>• ջուր՝ - 180,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ - 1,700,000 դրամ<br>• հեռախոս՝, ինտերնետ - 600,000 դրամ<br>• գազ-տարեկան - 3,200,000 դրամ | | | | | |

1/4

| | | |
|---|---|---|
| | | • գրասենյակային ծախսեր- 435,000 դրամ<br>• բենզին-200,000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 106557 դրամ<br>• Գազի կաթսային տեխնիկական զննում-70000 դրամ<br>• Աշխատավարձ վարչական աշխատողներին՝ 930000 դրամ<br><br>Ընդամենը 7421557(յոթ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3. ՀՀ առողջապահության նախարարություն<br>4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ<br>6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7.«ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն » հետ:<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• ամսական հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններին<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՓԲԸ-ի կողմից |

*Ծրագրի ղեկավար՝* [signature] *Արմենուհի Հովհաննիսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-042- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 01.1/80-2/28772-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N ԱԲ/02/14768-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 06/3-8/40211-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (աչքի խնամքի մանկական ձեռնարկ՝ 2 տեղ, 17.5 կգ, 963 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ-043-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-114-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N 01.1/80-2/525-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-626-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569792) 2016 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 31/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ-044-Ա**

**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/798-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 02/14/651-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 19-ի N ԱՐ/22.2/454-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1394-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից 2017 թվականին իրականացվող՝ 505,497,615 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գրանթ Թորնթոն» ՊԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2016 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N AT-AU-068-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված՝ N 230004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի նոյեմբերի 17-ին կնքված՝ N 400105 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի («Գյումրի» էլ. ցանց) հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 133008 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գորիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 560-00062 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի («Վանաձոր» էլ. ցանց) հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ 3130100005370 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 01708132572 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Շիրակի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 02108133502 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Սյունիքի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի նոյեմբերի 29-ին կնքված՝ N 14208138921 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 03108134373 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2012 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 114/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազատարի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 87,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2017 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N Ե-232 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 12-ից մինչև 2018 թվականի հունվարի 12-ը ընկած ժամանակահատվածում «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Երևանի կենտրոնի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 148,382 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02605138) 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N ԱԻՆ 00360 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Վանա-

ծորի կենտրոնի հակահրդեհային անվտանգության համակարգի սպասարկման աշխատանքների իրականացում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02605138) 2014 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N ԱԻՆ 146 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Երևանի կենտրոնի հակահրդեհային անվտանգության համակարգի սպասարկման աշխատանքների իրականացում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02605138) 2015 թվականի հուլիսի 30-ին կնքված՝ N ԱԻՆ 875 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Գյումրու կենտրոնի հակահրդեհային անվտանգության համակարգի սպասարկման աշխատանքների իրականացում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի («օպերատոր» ք. Երևան») հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի հուլիսի 17-ին կնքված՝ N 112782694 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Անդրանիկ» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ N 011149502 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

18) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի Շիրակի տարածքային կենտրոնի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N 112826544 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 115,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

19) «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի «Գորիս» հարավային տարածքի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2002 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 840002476 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 65,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

20) «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի «Վանաձոր» հյուսիսային տարածքի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 510065805 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

21) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2016 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N 119517643 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Hi-Line Optic ծառայության մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

22) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2016 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N 119517620 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Hi-Line Optic ծառայության մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

23) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N 117473730 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Hi-Line Optic ծառայության մատուցում՝ 60,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



24) «ՄԳԱ Վոթըր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02567873) 2015 թվականի մարտի 19-ին կնքված՝ N 0000196 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Մաքուր ջուր» խմելու ջրի մատակարարում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

25) «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719486) 2010 թվականի նոյեմբերի 16-ին կնքված՝ N 94 պայմանագրի 2015 թվականի նոյեմբերի 17-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

26) «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00807555) 2016 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 2016/1201 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի սպասարկման աշխատանքների և տրամադրված լիցենզիաների օգտագործման համար վճարումների իրականացում՝ 1,367,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

27) «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507137) 2017 թվականի հունվարի 11-ին կնքված՝ N 02/2017-Գ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 471,520 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիրի մարզպետներին, Գյումրու, Գորիսի, Վանաձորի ու Արմավիրի քաղաքապետներին:

ՆԱԽԱԳԱՀ ՍՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հովարդ Կարագյոզյան» Բժշկական,
Բարեգործական Հասարակական Կազմակերպություն
Գլխավոր Գործադիր
Տնօրեն Ռուզաննա Աղայանի կողմից
«23» հունվարի, 2017թ.

<<ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ>> ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
<<ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն` ք.Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք.Երևան, ՀՀ Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիր մարզեր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից համաձայն 10.12.2016թ. դրամաշնորհային պայմանագրի: 2017թ. ծրագիր բյուջեն կազմում է 505.497.615 ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | 2016թ.-ի դրությամբ շահառուներն են Երևանի, Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիր մարզերի և ԼՂՀ տարածքում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր ատամնաբուժական և ակնաբուժական կլինիկաները: 2016թ.- ի ընթացքում 99.969 երեխա ստացել է ատամնաբուժական և 24.590 երեխա` ակնաբուժական օգնություն: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել ՀՀ -ում և ԼՂՀ-ում գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 96.200 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում ՀՀ-ում նոր հաշվառվող 12,200-13,000 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 850-950 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:<br>Ակնաբուժական 5 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 7.240 և ԼՂՀ-ում հաշվառված 750 դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ՀՀ-ում նոր հաշվառվող 1.750-1.800 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 100-130 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 1.200-1480 և ԼՂՀ-ից 90-120 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 1.050-1.200 և ԼՂՀ-ից 140-160 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:<br>Ընդհանուր առմամբ 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար նախատեսվում է ՀՀ-ում 100.000-120.000 և ԼՂՀ-ում 8.500-9.000 ատամնաբուժական, և ՀՀ-ում 22,000- 22.800 և ԼՂՀ-ում 2.500-3.000 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում: Իրականացնելու ենք ակնաբուժական և ատամնաբուժական սկրինինգ գյուղական վայրերում:<br>Նշված միջոցառումների իրականացման համար 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսված ֆինանսական միջոցներ 505.497.615,00 ՀՀ դրամ, իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. |

| | | | |
|---|---|---|---|
| | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գնումներ (բուժ. սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար, բժշկական քարտեր, գրենական և գրասենյակային պիտույքներ): | 92,200,870.00 |
| | | Ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողութան աշխատանքներ (*բուժ.սարքավորումների չափումներ, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժ.անձնակազմի պրոֆ.զննում և այլն*): | 5,760,000.00 |
| | | Բուժանձնակազմի վերապատրաստում, փորձի փոխանակում և այդ նպատակներով գործուղումներ | 7,680,000.00 |
| | | Ծրագիրը իրականացնող վարձու անձնակազմի աշխատավարձ | 271,424,068.00 |
| | | Ծրագրի իրականացման համար համակարգչային ծրագրի ձեռքբերում | 7,200,000.00 |
| | | Վարչական աշխատակիցների աշխատավարձ | 48,246,128.00 |
| | | Կոմունալ ծախսեր *(5 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ, գազի և գազատարի տեխնիկական սպասարկում, հակահրդեհային սպասարկում և այլն)* | 12,000,000.00 |
| | | Տրանսպորտային ծախսեր *(դիզ.վառելիքի, ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում, տեխնիկական սպասարկում)* | 3,500,000.00 |
| | | Ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների պահպանության և վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, տնտեսական ապրանքների գնում *(կազմակերպական ծախսերի շրջանակներում)* | 27,840,000.00 |
| | | Գրասենյակային ծախսեր *(գրենական պիտույքներ, բժշկական և գրասենյակների համակարգչային ծրագրերի սպասարկում, պարագաներ, տեխնիկական սպասարկում և այլն)* | 2,807,400.00 |
| | | Աուդիտ *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների) և հաստատումների վճար* | 3,840,000.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում կատարվելու են աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության *(չի անհրաժեշտ օգտվել հարկային արտոնություններից)* | 14,839,149.00 |
| | | *Հարկեր,տուրքեր`(անշարժ գույքի և փոխադրամիջոցների գույքահարկ և հողի հարկ)* | 3,840,000.00 |
| | | Սեղմումներ և տեղեկատվական գրականության տպագրություն | 4,320,000.00 |
| | | Ընդամենը | 505,497,615.00 |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Ձեր բնույթը (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | *2017թ.հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ծրագրի իրականացման համար կնքվելու են պայմանագրեր* բուժ. սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար, բժշկական քարտեր, գրենական և գրասենյակային պիտույքներ: | 93,640,870.00 |
| | | Հաշվետվությունների և տեղեկատվական նյութերի տպագրում: | 4,320,000.00 |
| | | Օգտվելու ենք տարբեր մատակարարող կազմակերպություններից մատուցվող ծառայություններից՝ | |
| | | Աուդիտորական ծառայությունների մատուցում *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների)* - <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ: | 3,750,000.00 |
| | | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում - փոխադրամիջոցների հետ կապված, այլ մատակարարների հետ, վառելիք, ավտոմեքենաների պահեստամասեր տարբեր մատակարարների միջոցով, | 3,500,000.00 |
| | | Էլեկտրաէներգիայի մատակարարում 6 կլինիկաների համար - <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ>> ՓԲԸ: | 4,700,000.00 |
| | | Բնական գազի մատակարարում, գազատարի տեխնիկական սպասարկում 5 կլինիկաների համար- <<ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ>> ՓԲԸ: | 4,500,000.00 |
| | | Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում և կարգաբերում - <<Էյ-Ի-Ջի Սերվիս>> ՍՊԸ: | 148,382.00 |
| | | Երևանի, Գյումրու և Վանաձորի կլինիկաների շենքերի հակահրդեհային անվտանգության համակարգի տեխնիկական սպասարկում - <<ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ>> ՍՊԸ: | 360,000.00 |
| | | Հեռախոսակապի և Hi-Line Optic /ինտերնետ/ ծառայության մատուցում 5 կլինիկաների համար -<<ԱՐՄԵՆՏԵԼ>> ՓԲԸ, և այլն: | 1,400,000.00 |
| | | 5 կլինիկաներում ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող կազմակերպության մատուցած ծառայություններ, 22ալցված ջրի ձեռք բերում՝ Մգս Վոթըր ՍՊԸ: | 600,000.00 |
| | | Այլ կոմունալ ծախսեր | 291,618.00 |
| | | Ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողութան աշխատանքներ (*բուժ.սարքավորումների չափումներ, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժ.անձնակազմի պրոֆ.զննում, բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում*) - <Էկոլոգիա>> ՍՊԸ, <<Չափագրության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ, ՀՀ ԱՆ ճառագայթային բժշկ. և այրվածքների գիտական կենտրոն, Թիվ 5 պոլիկլինիկա, <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ | 5,760,000.00 |
| | | Շենքերի պահպանության աշխատանքներ, վերանորոգումներ, կահույք, գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ, *(կազմակերպական ծախսերի շրջանակներում) շենքի պահպանության համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների գնում:* | 27,840,000.00 |
| | | բուժանձնակազմի վերապատրաստում, փորձի փոխանակում և այդ նպատակներով գործուղումներ | 7,680,000.00 |
| | | Կարագյոզյան հաստատության ծառայություններից օգտվող երեխաների, որոնցից է նաև ակնաբուժական և ատամնաբուժական ծառայությունից օգտվող երեխաները, հաշվառումը և սպասարկումը համակարգչային ծրագրով իրականացնելու համար ծրագրի ձեռքբերում: | 7,200,000.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում համակարգչային ծրագրերի սպասարկում. <<Հայկական Ծրագրեր>> ՍՊԸ: | 1,367,400.00 |
| | | Ընդամենը | 167,058,270.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու ակնկալվող գործարքները և համապատասխան պայմանագրերը պարբերաբար կներկայացվեն Ձեր քննարկմանը:* | |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսերի ընդհանուր արժողությունը կազմում է 101.033.741,00 ՀՀ դրամ և ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի՝ 505.497.615,00 ՀՀ դրամի, 19.98%: | |
| | | վարչական աշխատակիցների աշխատավարձ | 48,246,128.00 |
| | | կոմունալ ծախսեր *(5 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ, գազի և գազատարի տեխնիկական սպասարկում, հակահրդեհային սպասարկում և այլն)* | 12,000,000.00 |
| | | տրանսպորտային ծախսեր *(դիզ.վառելիք, ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում, տեխնիկական սպասարկում)* | 3,500,000.00 |
| | | ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների պահպանության և վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, տնտեսական ապրանքների գնում | 27,840,000.00 |
| | | գրասենյակային ծախսեր *(գրենական պիտույքներ, գրասենյակների համակարգչային ծրագրեր, պարագաներ, տեխնիկական սպասարկում, տնտեսական ապրանքների գնում )* | 2,807,400.00 |
| | | աուդիտ *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների)* | 3,750,000.00 |
| | | Ադմինիստրացիայի աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության; ***(չի ակնկալվում օգտվել հարկային արտոնություններից )*** | 2,890,213.00 |
| | | Ընդամենը | 101,033,741.00 |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարան և Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիրի մարզպետարանների առողջապահության վարչություններ: | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությանը /ԱՄՆ/ և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ խորհուրդին ամսական և եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչությունների կողմից ծրագրի իրականացման ընթացքի ուսումնասիրություն, ՀՀ հարկային ծառայությանը ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներին ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվության տրամադրում՝ ըստ պահանջի: | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ-045- Ա**
**քաղ. Երևան**

# «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/912-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 02/14/706-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N ԱԲ/22.2/507-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/378-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից 2017 թվականին իրականացվող՝ 33,185,192 դրամ ընդհանուր արժեքով «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դավիթ Թագավոր» հրատարակչություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03530755) 2017 թվականի հունվարի 9-ին կնքված՝ N ԼԱ-03/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Լսողության խանգարում ունեցող երեխաների երկրորդ խմբի հնչյունների ամրապնդման վարժությունների համակարգը» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրում՝ 1,926,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիրի մարզպետներին, Գյումրու, Գորիսի, Վանաձորի ու Արմավիրի քաղաքապետերին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
<<Հովարդ Կարագյոզյան>> Բժշկական,
Բարեգործական Հասարակական Կազմակերպություն
Գլխավոր Գործադիր
Տնօրեն Ռուզաննա Աղայանի կողմից
«24» հունվարի, 2017թ.

# <<ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ>> ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան լսողական խանգարումներ ունեցող երեխաներին լսողական ապարատների, մեթոդական գրականության տրամադրումը: Լսողական խնդիրներ ունեցող երեխաների համար խոսքի զարգացման անհատական և խմբային-երաժշտական պարապմունքներ, հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրումը: | |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից | |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ.) | |
| 4 | Ծրագիրը կատարողը | <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: | |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք.Երևան, Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիր մարզեր և Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում | |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից համաձայն 10.12.2016թ. դրամաշնորհային պայմանագրի: 2017թ.-ին իրականացվելիք «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի բյուջեն կազմում է 33.185.192,00 ՀՀ դրամ: | |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են՝ Երևան, Շիրակի, Սյունիքի, Լոռու, Արմավիր մարզերի և ԼՂՀ տարածքում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր կլինիկաները | |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: | |
1. Սահմանել, որ «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 00463845) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-237-Ա (2016 թվականի ապրիլի 29-ի N Մ-315-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վիշկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02807228) 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N 03 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Թալինի երաժշտական դպրոցի հիմնանորոգման համար անհրաժեշտ շինարարական ապրանքների մատակարարում՝ 772,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 061 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-656-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 13-ի N 01.1/80-2/362-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/881-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար գուդրոնի ներկրում և վերամշակում» ծրագրի մասին» N Մ-656-Ա (2015 թվականի հուլիսի 30-ի N Մ-831-Ա և դեկտեմբերի 25-ի N Մ-1390-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 062 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՐԻՆ ՏԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/931-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 02/14/702-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1207-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9,283,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի մանկապարտեզի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված N ԼՂ-Կ-07/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 9,283,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«12» հունվարի 2017թ.

« Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի նորակառույց մանկապարտեզի ամբողջական կահավորում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Յիմնադրամի կողմից կառուցված Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Յայաստան» համահայկական հիմնադրամ (ՅՅ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՅՎՅՅ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Յանրապետության, Քարին Տակ համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 9.283.500,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Շուշիի շրջանի |



| | | |
|---|---|---|
| | | Քարին Տակ գյուղի մանկապարտեզը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2017թ փետրվարի 08-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2017թ սեպտեմբերի 08-ը ընկած ժամանակահատվածում կահավորել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի մանկապարտեզը՝ 9.283.500,00 դրամ արժեքով |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՅԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Յավելվածի ցանկի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 9.283.500,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՅ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՅՅ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ - 063 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՍԱՐԳՍԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/930-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 02/14/703-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1226-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 11,036,700 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված N ԼՂ-Կ-08/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 11,036,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«12» հունվարի 2017թ.

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնի ամբողջական կահավորում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Հիմնադրամի կողմից կառուցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Սարգսաշեն գյուղ, սոցիալական բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 11.036.700,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2017թ. սեպտեմբերի 08-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնի կահավորում 2016թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2017թ.սեպտեմբերի 08-ը ընկած ժամանակահատվածում՝ 11.036.700,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 11.036.700,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ- 064 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/802-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 02/14/648-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 19-ի N ՖԲ/ԱնՄ-4-1/462-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01/07-1/550-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N ԱԲ/22.2/484-17, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի հունվարի 20-ի N 07/06.2/442-17 ու Հայաստանի Հանրապետության առընթեր պետական եկամուտներ կոմիտեի դեկտեմբերի 18-ի N 06/3-8/1112-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 192,703,936 դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2012 թվականի փետրվարի 29-ին կնքված N 10864278 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 240,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի հունվարի 29-ին կնքված N 003 պատվեր-դիմումում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2015 թվականի մարտի 30-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի դեկտեմբերի 31-ին կնքված՝ N 116560100 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բաժանորդային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N ՄՍ-31/10-1 և 2014 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՄՍ-23/09-2 (2016 թվականի օգոստոսի 29-ին կնքված համաձայնագրերի խմբագրությամբ) պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի վարձակալություն 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 19,409,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N ՄՍ-21/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահեստային տարածքի վարձակալություն 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 306,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N CO854 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2014 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N IG-1764 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտներ կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ. հայաստանյան
Ներկայացուցչության ղեկավար՝
Աստղիկ Մովսիսյան

..............................

24-ը հունվարի 2017 թ.

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել Հայաստանում երեխաների և երիտասարդների սոցիալ-տնտեսական և կրթական շահերի պաշտպանությանը և բարեկեցության բարձրացմանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ (հասցե՝ ԱՄՆ, 20036 ք. Վաշինգտոն , 2000 L փ. NW, բն. 500, հեռ.՝ 001 (202) 640-6775, կայք՝ www.savethechildren.org)<br>Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Լաան Վան Նյու Ոստ-Ինդի 14-16 – 2593 BT, հեռ.՝ 0031 (0)70 338 44 48 , կայք՝ www.savethechildren.nl)<br>Սեյվ դը չիլդրեն Շվեյցարիա (հասցե՝ Շվեյցարիա, ք. Ցյուրիխ, Միլքուայ 253, 80-15233-8, հեռ.՝ 0041 (0) 44 267 74 70 , կայք՝ www.savethechildren.ch)<br>Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ (հասցե՝ Մեծ Բրիտանիայի Թագավորություն, ք. Լոնդոն, Սթ. Վինսենթ Հաուզ 30 Օրանժ փ, հեռ. 0044 (0) 203 272 0300, կայք՝ https://www.savethechildren.net) |
| 4 | Ծրագրի կատարողը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչություն<br>Ք. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ 02251537 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Երևան<br>Բնագավառը՝ սոցիալ-տնտեսական և կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | 192,703,936 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործության ստացողներն են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 200 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, 100 հաշմանդամություն ունեցող երեխաներ, 100 փախստականներ Սիրիայից, մոտ 200 000 վերարտադրողական տարիքի անձինք, խնամքի տարբեր հաստատություններում գտնվող 80 երեխա: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչությունը 2017 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում նախատեսում է իրականացնել հետևյալ գործողությունները.<br><br>*1. Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար*<br><br>Հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական ներառական կրթությունն ու զբաղվածությունը խթանելու նպատակով նախատեսվում է մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ կազմակերպել հաշմանդամություն ունեցող 300 անձանց հետ՝ իրազեկելու ՄԿՈՒ հաստատություններում կրթություն ստանալու հնարավորությունների մասին; զարգացնել Երևանի և թիրախային մարզերի /Արմավիր, Արագածոտն, Կոտայք, Տավուշ, Վայոց ձոր և Սյունիք/ հատուկ/գիշերօթիկ դպրոցների դասախոսական և վարչական անձնակազմի կարողությունները՝ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ անցկացնելու վերաբերյալ; 46 նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական/ՄԿՈՒ հաստատություններից մրցութային կարգով ընտրված հինգին տրամադրել փոքր դրամաշնորհներ՝ նորարարական սոցիալական ձեռնարկություններ հիմնելու և հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար շարունակական մասնագիտական կրթություն, ինչպես նաև պրակտիկա ապահովելու նպատակով և լավագույն 25 ուսանողներին ապահովել երկարաժամկետ զբաղվածությամբ; ստեղծել ՄԿՈՒ հաստատությունների ցանց՝ սոցիալական ձեռնարկությունների հիմնման նպատակով; հաշմանդամություն ունեցող 200 երիտասարդների համար ապահովել պրակտիկայի և զբաղվածության հնարավորություններ; խթանել ՄԿՈւ հաստատությունների համար սոցիալական ձեռնարկատիրության նորարարական մոդելի մշակումը՝ կլոր սեղան քննարկումների և ԶԼՄ-ների լուսաբանման միջոցով: Ապահովել, որպեսզի այդ մոդելը հաստատվի Կառավարության կողմից և գործարկվի ՄԿՈՒ հաստատություններում:<br>Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 81,533,233 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:<br><br>2. Սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման նվազեցում:<br>Նախաձեռնության նպատակն է նպաստել սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումների նվազեցմանը Հայաստանում: Նախաձեռնությունն իրականացվելու է Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում՝ ընդգրկելով 22 քաղաքային համայնք մարզերում և 3 համայնք Երևանում: Նախաձեռնության շրջանակներում կտարածվեն նախկինում տպագրված թերթոններ, տեղեկատվական գրքույկներ և պաստառներ՝ սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման բացասական ազդեցության վերաբերյալ: Բնակչության իրազեկությունը բարձրացնելու նպատակով կիրականացվեն հեռուստատեսային ծրագրեր վերարտադրողական տարիքի անձանց մասնակցությամբ, ներհամայնքային և տարբեր համայնքների ակտիվ խմբերի թվով 21 հանդիպումներ: |

Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 2,890,550 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև ապրիլ ամիսները:

*3. Հաշմանդամություն ունեցող երեխաներին համայնքահեն ծառայությունների տրամադրում*

Ծրագրի իրականացման արդյունքում Երևան և Արմավիր քաղաքներում 2016թ. հիմնվել են անկախ կյանքի զարգացման ցերեկային կենտրոններ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար: Նախաձեռնության շրջանակներում Երևանում, Արմավիրում և Արարատի մարզում բնակվող 0-18 տարեկան հաշմանդամություն ունեցող առնվազն 100 երեխաներ հնարավորություն կունենան ստանալ որակյալ ծառայություններ, որոնք ուղղված կլինեն երեխաների առողջության վերականգնմանը, զարգացմանն ու անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանը: Նախաձեռնության նպատակներից է նաև ծնողական կրթության և հոգեբանական աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների ամրապնդմանն ու ընտանիքում մեծանալու նրանց իրավունքի իրացմանը:

Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 8,818,179 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

**4. Խոցելի երեխաների սոցիալական ներառում՝ երեխայի այլընտրանքային խնամքի, ընտանեկան աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնման միջոցով**

Ծրագրի նպատակն է երեխայի խնամքի համակարգում ընթացող բարեփոխումների շրջանակներում աջակցել ՀՀ կառավարությանը երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքն ու համայնքահեն սոցիալական և կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու գործընթացում:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համապատասխան իրավական և կանոնակարգող դաշտի ձևավորում, ընդլայնել և կարգավորել ընտանիքին փոխարինող այլընտրանքային խնամքի՝ խնամատարության համակարգը, այդ թվում վերջինիս աջակցության և մշտադիտարկման մեխանիզմները, կազմակերպել դասընթացներ երեխայի այլընտրանքային խնամքի ոլորտում ընթացող բարեփոխումների վերաբերյալ (մոտ 200 մասնակից), իրականացնել քարոզչական և հանրային իրազեկման միջոցառումներ՝ մարզային և ազգային մակարդակներում (6 հեռուստահաղորդում), իրականացնել դեպք վարողների կարողությունների զարգացում (12 դեպք վարող), խնամատար ծնողների ընտրություն, հաշվառում, վերապատրաստում (թվով 180 խնամատար ծնող), մասնագիտական ձեռնարկի մշակում և հրատարակում, սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների համար տեղեկատվական հարթակների ձեռքբերում, «Մանուկ» տեղեկատվական համակարգի արդիականացում:

Ծրագրի շրջանակներում խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվող 80 երեխաների խնամքը կկազմակերպվի խնամատար ընտանիքներում, այն դեպքերում երբ վերադարձը կենսաբանական կամ խնամակալ ընտանիք հնարավոր չէ կամ այդ վերադարձը չի բխում երեխայի լավագույն շահերից:

Նախատեսվում է նաև իրականացնել խնամատարության վերաբերյալ կարճամետրաժ վավերագրական մեկ ֆիլմի և երկու սոցիալական գովազդի պատրաստում և հեռարձակում:



Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 5,883,936 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

*5. Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար աղետների ռիսկի նվազեցում (ԱՌՆ)*

Երեխաների(այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող) երեխաների պատրաստվածությունը աղետների ռիսկերի հանդեպ բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել ծրագիրը Տավուշի, Լոռու, Սյունիքի, Արմավիրի մարզերի, ինչպես նաև Երևանի 55 հաստատություններում (ներառյալ 10 մանկապարտեզ և 45 ներառական դպրոց), վերապատրաստել թիրախ հաստատությունների ուսուցիչներին, կազմակերպել երեխաների աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ կրթությունը, պատրաստել սոցիալական գովազդ և մուլտֆիլմ, ինչպես նաև պատրաստել ձեռնարկ ԱՌՆ կրթության վեաբերյալ, որը կներառվի ԿԱԻ-ի վերապատրաստման փաթեթի մեջ:

Նախատեսվում է նաև իրականացնել ազգային եւ տեղական կառավարման մակարդակներում կարողությունների զարգացում, ապահովելով նոր ընդունված ռազմավարություններում եւ պլաններում ներառական ԱՌՆ մոտեցումների ընգրկումը, «Դիմակայուն Համայնք»-ի մոդելային բաղադրիչների, այդ թվում տարբեր միջազգային գործիքների, «Կանաչ Լար», ԱՌՆ կենտրոններ, Կլիմայի փոփոխության հարմարվողականության տեխնոլոգիաների կիրառումը: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև վերապատրաստման դասընթացներ արտակարգ իրավիճակների կառավարման մարմինների համար, գործընկեր նախարարությունների միջոցով ԱՌՆ առնչվող կրթական նյութերի ուղղորդում, ինչպես նաև «Ապահով դպրոց»-ի հայեցակարգի կիրառման օգտագործման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 29,444,276 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

6. Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության

Նախաձեռնության նպատակն է բարձրացնել նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիությունը և բարելավել դպրոցական տարիքի երեխաների առողջության և սննդի հետ կապված խնդիրները Գեղարքունիքի և Լոռու մարզերի 4 համայնքներում, որտեղ ներկայումս չկան գործող մանկապարտեզներ, իսկ դպրոցներում բացակայում են կամ առկա են վատթար սանիտարական պայմաններ: Ծրագրի շրջանակներում ընտրված 2 համայնքների դպրոցներում կստեղծվեն նախադպրոցական կրթության կենտրոններ, որոնք ամբողջովին կվերանորոգվեն և կկահավորվեն: Ընտրված դպրոցներում կվերանորոգվեն յուրաքանչյուրում առնվազն 2 զուգարան (տղաների և աղջիկների համար առանձնացված), որոնք ապահովված կլինեն մշտական հոսող ջրով և կոյուղիով, կտեղադրվի նոր սանիտարական տեխնիկա: Կենտրոններին կից կստեղծվեն սանհանգույցներ՝ հարմարեցված 4-6 տարեկան երեխաների կարիքներին: Ի լրումն ընտրված երկու համայնքների ևս երկու համայնքներում գործընկերների ջանքերով վերանորոգված մանկապարտեզներում կկազմակերպվեն վերապատրաստման

նախադպրոցական կրթության դասընթացներ համայնքներից ընտրված մանկավարժների համար: 10 ամիս տևողությամբ նախադպրոցական կրթության դասընթացներ կկազմակերպվեն 5-6 տարեկան երեխաների համար շաբաթական 5 օր և օրական 4 ժամ տևողությամբ: Կստեղծվեն «Ծնողական ռեսուրս կենտրոններ» և կկազմակերպվի ծնողական կրթություն 0-6 տարեկան երեխաներ ունեցող ծնողների համար:
Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 33,893,760 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

*7. Փախստականների ներուժի զարգացման և բարեկեցության խթանում*

Երևանում և հարակից շրջաններում բնակվող սիրիահայ փախստականների բարեկեցությունը և աշխատանքային հնարավորությունները բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել կարճաժամկետ մասնագիտական ուսուցում՝ հաշվի առնելով շահառուների նախասիրություններն ու Աշխատանքի պետական գործակալության կողմից իրականացվող շուկայի ուսումնասիրությունները: Նախատեսվում է նաև տրամադրել անմիջական օգնություն առաջին անհրաժեշտության պարագաների և սննդի տեսքով թվով 100 փախստական ընտանիքի:
Շահառուների կարիքների և ռիսկերի գնահատման համար նախատեսվում է ներգրավել դեպքի վարման թիմեր, ովքեր կիրականացնեն շահառու ընտանիքների կարիքների գնահատում և կարիքի դեպքում կտրամադրեն նաև հոգեբանական աջակցություն:
Երեխաների ինտեգրման և զարգացման նպատակով նախատեսվում է համագործակցել թվով 5 Երևանյան դպրոցների հետ, երեխաների նախաձեռնությամբ տարբեր գործողությունների իրականացման նպատակով:
Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 4,840,000 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2017 թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

Կազմակերպչական ծախսերը նախատեսված են 25,400,000 դրամի չափով:

10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| Անվանումը | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Կրթական և տեղեկատվական նյութերի մշակում | 2,000,000 |
| Կրթական և տեղեկատվական նյութերի տպագրություն | 15,000,000 |
| Աշխատաժողովների, հանրային իրազեկման գործողությունների, դասընթացների և այլ նպատակներով տարածքների վարձակալում | 3,000,000 |
| Աշխատաժողովների, հանրային իրազեկման գործողությունների, դասընթացների և այլ նպատակներով ընդմիջումների կազմակերպման և սննդի մատակարարման ծառայություններ | 3,000,000 |



| Անվանումը | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Հյուրանոցային ծառայությունների մատուցում | 5,000,000 |
| Կրթական և տեղեկատվական հոլովակների պատրաստում | 10,000,000 |
| Կրթական և տեղեկատվական նյութերի և հոլովակների տարածում զանգվածային լրատվության միջոցներով, հայտարարությունների տեղադրում | 15,000,000 |
| Վերանորոգումների և հարմարեցումների նպատակներով շինարարական ապրանքների և ծառայությունների ձեռքբերում | 30,000,000 |
| Դպրոցների, նախադպրոցական, հատուկ և այլ շահառու հաստատություններն ծրագրի շրջանակներում կահույքի տրամադրման նպատակով կահույքի, պարագաների ձեռքբերում, պատրաստման և վերանորոգման ծառայությունների մատուցում | 15,000,000 |
| Շահառուներին անմիջական օգնության տրամադրման նպատակով սննդի ձեռքբերում | 4,000,000 |
| Շահառուներին անմիջական օգնության տրամադրման նպատակով ոչ սննդային ապրանքների ձեռքբերում | 10,000,000 |
| Միջոցառումների իրականացման նպատակով վառելիքի մատակարարման և մեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում | 8,000,000 |
| Ծրագրի արդյունքների և ազդեցության գնահատում | 15,000,000 |
| Գրասենյակային տարածքի վարձակալություն և սպասարկում | 19,800,000 |
| Հեռահաղորդակցության ծախսեր | 4,100,000 |
| Նյութատեխնիկական ապահովման ծախսեր | 1,500,000 |
| Աուդիտի ծախսեր | 2,000,000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 162,400,000 |

11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են հետևյալ կազմակերպչական ծախսերը.

- **Գրասենյակային տարածքի վարձակալության և սպասարկման ծախսերը կտրվածքով կազմում են 19,800,000 ՀՀ** դրամ:
- Հեռահաղորդակցության ծախսերը կազմում են 4,100,000 ՀՀ դրամ:
- Նյութատեխնիկական ապահովման ծախսերի համար նախատեսվում է 1,500,000 ՀՀ դրամ:
- Նյութատեխնիկական ապահովման ծախսերի համար նախատեսվում է 3,000,000 ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 28,400,000 ՀՀ դրամ

12 Համագործակցությունը պետական կառավարման, տեղական

Ծրագրի իրականացման ընթացքում Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հայաստանյան ներկայացուցչությունը կհամագործակցի ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարությունների,

| | | |
|---|---|---|
| | ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | պետական զբաղվածության գործակալության, բժշկա- սոցիալական փորձաքննություն գործակալության, ՀԿ-ների, գործատուների, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ, Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ և Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ կազմակերպությունների կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Ծրագրի իրականացումը համաձայնեցվում է ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարությունների հետ` ըստ վերջիններիս հետ կնքված Փոխըմբռնման հուշագրերի: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017 թվականի N Մ - 065 - Ա

քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/911-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունվարի 20-ի N 03/3-8/1480-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված համակարգչային տեխնիկայի (347 հատ համակարգիչ, 50 հատ տպիչ, 52 հատ սերվեր, հավելյալ պարագաներ, 13,000 կգ քաշով, 382,989.78 ԱՄՆ-ի դոլար արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռը բաշխվելու է Հայաստանի Հանրապետության դպրոցների միջև, համատեղ ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հնդկաստանի կառավարության հետ համատեղ <<Հայաստան> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող համակարգչային համալրման ծրագիր
ՀՀ, Վայոց Ձորի մարզ
Շահառու դպրոցների ցանկ

| | Դպրոցը | Տնօրենը | Հեռախոս | Առկա Համակարգիչների թիվը | Տրվելիք համակարգ թիվը | Տրվելիք Տպիչների թիվը | Աշակերտների թիվը | Միջին և ավագ դպրոցի աշ. թիվը | Ուսուցիչ. թիվը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Եղեգնաձորի տարածաշրջան | | | | | | | | | |
| 1 | Ագարակաձորի միջն. | Հովհաննիսյան Նաիրա | 093-642-031 | | 10 | 1 | 121 | 79 | 27 | |
| 2 | Արավնաձորի միջն. | Մանդոյան Մանուկյան | 091-726-908 | 2 | 10 | 1 | 230 | 130 | 32 | |
| 3 | Աղնջաձորի միջն | Եղիգարյան Հրայր | 093-832-130 | 0 | 5 | 1 | 46 | 26 | 16 | |
| 4 | Արենիի միջն. | Հայրապետյան Ավետ | 093-933-780 | 0 | 10 | 1 | 221 | 130 | 29 | |
| 5 | Արտաբույնքի միջն. | Բաբայան Մնորիկ | 096-339-704 | 2 | 10 | 1 | 157 | 100 | 24 | |
| 6 | Արփիի միջն. | Հովսեփյան Արա | 093-763-173 | 0 | 10 | 1 | 165 | 120 | 22 | |
| 7 | Գետափի միջն. | Քոչարյան Թագուհի | 093-539-488 | 10 | 10 | 1 | 203 | 126 | 35 | |
| 8 | Գլաձորի միջն. | Հայրապետյան Արուս | 093-885-120 | 0 | 10 | 1 | 243 | 110 | 32 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 9 | Գողթանիկի հիմնակ. | Ասատրյան Անահիտ | 094-305-857 | 0 | 1 | 1 | 15 | 5 | 8 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 10 | Ելփինի միջն. | Գևորգյան Ժորա | 093-224-336 | 4 | 6 | 1 | 186 | 100 | 27 | |
| 11 | Եղեգիսի միջն. | Թադևոսյան Լևոն | 077-119-399 | 0 | 7 | 1 | 59 | 47 | 23 | |
| 12 | Եղեգնաձորի N1 հիմն. | Գրիգորյան Անուշ | 077-724-982 | 10 | 10 | 1 | 385 | 201 | 48 | |

Համահայկական հիմնադրամ All-Armenian Fund "Hayastan"

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Եղեգնաձորի N2 հիմն | Սարգսյան Անահիտ | 099-622-362 | 15 | 10 | 1 | 366 | | 41 | |
| 14 | Թառաթումբի միջն | Խաչատրյան Զոհրաբ | 093-327-403 | 0 | 7 | 1 | 59 | 47 | 17 | |
| 15 | Խաչիկի միջն. | Թադևոսյան Սուրիկ | 093 780-399 | 0 | 8 | 1 | 106 | 55 | 22 | |
| 16 | Հերմոնի հիմն | Խաչատրյան Ժորա | 094-777-009 | 0 | 1 | 1 | 23 | 10 | 13 | |
| 17 | Հորբատեղի հիմն | Սարգսյան Միքայել | 099-021-737 | 0 | 1 | 1 | 30 | 18 | 13 | |
| 18 | Հորսի հիմն. | Վարդանյան Մխիթար | 099-178-090 | 0 | 1 | 1 | 15 | | 7 | |
| 19 | Մալիշկայի N1 միջն. | Մարգարյան Արմեն | 093-840-230 | 0 | 10 | 1 | 272 | 182 | 34 | |
| 20 | Մալիշկայի N2 միջն. | Դավթյան Համիկ | 093-454-563 | 0 | 10 | 1 | 230 | 140 | 26 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 21 | Մոզրովի հիմն. | Մելքոնյան Արամ | 093-656-092 | 0 | 1 | 1 | 2 | | 3 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 22 | Շատինի միջն. | Մարգարյան Բաբիկ | 099-050-115 | 10 | 10 | 1 | 240 | 160 | 32 | |
| 23 | Չիվայի միջն. | Ասատրյան Արսեն | 093-565-440 | 0 | 8 | 1 | 75 | 53 | 20 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 24 | Ռինդի միջն. | Թադևոսյան Աշոտ | 093-827-319 | 3 | 10 | 1 | 156 | [illegible] | 19 | |
| 25 | Սալլի հիմն. | Հովակիմյան Մհեր | 093-493-626 | 0 | 5 | 1 | 20 | | 13 | |
| 26 | Վարդահովիտի հիմն. | Մարգարյան Գագիկ | 093-091-551 | 0 | 5 | 1 | 11 | | 12 | |
| 27 | Վերնաշենի միջն | Հարությունյան Համլետ | 093-385-556 | 4 | 4 | 1 | 93 | 60 | 27 | |
| 28 | Քարագլխի միջն. | Հովհաննիսյան Գոհար | 077-779-989 | | 8 | 1 | 83 | 55 | 21 | |
| 29 | Եղեգնաձորի վարժ. | Աբրահամյան Վահան | 094-450-920 | | 10 | 1 | 95 | 95 | 16 | |
| 30 | Եղեգնաձորի ավագ | Հարությունյան Կարինե | 098-387-555 | 16 | 10 | 1 | 353 | 353 | 38 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վայքի տարածաշրջան | | | | | | | | | |
| 31 | Ազատեկի միջն. | Ղազարյան Ավարո | 094-703-299 | 0 | 8 | 1 | 81 | 65 | 22 | |
| 32 | Արինի միջն | Գևորգյան Ալբերտ | 093 472-102 | 1 | 5 | 1 | 54 | 34 | 16 | |
| 33 | Արտավանի միջն. | Միերյան Հենզել | 077-350-171 | | 5 | 1 | 55 | 45 | 18 | |
| 34 | Բարձրունու միջն | Մարգարյան Անդրանիկ | 093-823-359 | | 5 | 1 | 45 | 25 | 17 | |
| 35 | Գնդեվազի միջն | Անդրեասյան Գերասիմ | 093-765-876 | | 10 | 1 | 105 | 94 | 22 | |
| 36 | Գոմքի միջն. | Խաչատրյան Նվարդ | 093-587-968 | 4 | 1 | 1 | 31 | 20 | 15 | |
| 37 | Զառիթափի միջն. | Աբրահամյան Սամվել | 077 175 444<br>0282 91 3 16 | 0 | 10 | 1 | 185 | 105 | 24 | |
| 38 | Ջերմուկ | Սաղաթելյան Զոյա | 098-512-796 | 0 | 1 | 1 | 13 | 7 | 11 | |
| 39 | Խնձորուտի միջն. | Օհանյան Համլետ | 094-657-596 | 2 | 5 | 1 | 84 | 50 | 22 | |
| 40 | Կարմրաշենի միջն. | Թովմասյան Արմեն | 094-040-583 | 1 | 1 | 1 | 29 | | 15 | |
| 41 | Հերիերի միջն. | Ոսկանյան Երվանդ | 093-836-503 | 0 | 10 | 1 | 118 | 78 | 23 | |
| 42 | Մարտիրոսի միջն | Հակոբյան Թարո | 093-316-070 | 0 | 10 | 1 | 115 | 85 | 71 | |
| 43 | [illegible] | [illegible] | | | | | | | | |
| 45 | Սարավանի հիմն. | [illegible] Աշոտ | 094-84[illegible] | 0 | 5 | 1 | 22 | | 9 | |
| 46 | [illegible] | [illegible] | 093-411-644 | 0 | 1 | 1 | 17 | 13 | 12 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | Վայքի հիմնակ. | Աթանակինյան Սլավա | 093-967-454 | 0 | 10 | 1 | 455 | 200 | 44 | |
| 48 | Վայքի վարժ | Գասպարյան Սահակ | 093-728-208 | 4 | 6 | 1 | 136 | 136 | 21 | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| 49 | Վայքի ավագ | Թունյան Վարդուշ | 093-512-221 | 6 | 10 | 1 | 255 | 140 | 32 | |
| 50 | Ջերմուկի ավագ | Արսենյան Արմինե | 093-036-331 | 17 | 10 | 1 | 368 | 205 | 47 | |
| | | | | | | | | | | ստեղծել 2-րդ հավելյալ դասարան |
| | Ընդհանուրը՝ | 50 դպրոց | | 111 | 347 | 50 | 6798 | | 1137 | |

All-Armenian Fund "Hayastan"

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 066 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 25-ի N 01.1/80-2/998-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 23-ի N 06/3-8/1687-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 07.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (5 տեղ, 133 կգ ընդհանուր քաշով, 44,200 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

Ռուսաստանից ՌԴ քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի կողմից **N298-16058464 առ 18.01.2017թ.** ավիաբեռնագրով ուղարկված բեռի

№ 1/9.3

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քանակը /հատ/ | Քաշը կգ /բրուտտո/ | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դրայվեր արևային մարտկոցի համար | 1 | 4 | 15 | 1200 |
| 2 | Արևային պանել 120վտ | | 4 | 25 | 8000 |
| 3 | Մոնիտոր 7դյույմ | 1 | 4 | 12 | 4000 |
| 4 | Մսաղացի շարժիչ պտույտափոխանցիչով /ռեդուկտորով/ | 1 | 4 | 24 | 8000 |
| 5 | Փոքր ինքնաթիռի շարժիչ 45մմ շառավղով | | 4 | 20 | 4000 |
| 6 | Տեսահսկման տեսախցիկ /կամերա/ | 1 | 3 | 15 | 3000 |
| 7 | Մանկական ինքնաթիռ x-uav | 1 | 2 | 7 | 4000 |
| 8 | Մանկական ինքնաթիռ x-8 | | 4 | 7 | 8000 |
| 9 | Համակարգչի մանկական խաղերի վահանակ | | 4 | 8 | 4000 |
| | **Ընդամենը** | **5** | | **133** | **44200** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 հունվարի 2017 թվականի N Մ - 067 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունվարի 27-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 30-ի N 01.1/80-2/1186-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 26-ի N 06/3-8/2209-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 07.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (1 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 20,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

**Ռուսաստանից ՌԴ քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի կողմից N298-16071823 առ 22.01.2017թ. ավիաբեռնագրով ուղարկված բեռի**

Մ-1/գ.կ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քանակը /հատ/ | Քաշը կգ /բրուտտո/ | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գոտեպայուսակ «մուլտիկամ» | 1 | 80հատ | 32 | 16000 |
| 2 | Գրքեր Ա. Բաղդասարովի-Քաղաքականություն | | 10հատ | 8 | 4000 |
| **Ընդամենը** | | 1 | | 40 | 20000 |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

27 հունվարի 2017 թվականի N Մ - 068 - Ա

քաղ. Երևան

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/1147-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունվարի 26-ի N 06/3-8/2134-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Պապիկյան Տիգրանի ֆինանսավորմամբ (անձնագիր՝ N AA00027632, տրված՝ 01.10.2013 թ. 002-ի կողմից) «OPHARD hygiene» կազմակերպության կողմից Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի (հեղուկ օճառի համար նախատեսված տարաներ, 1 տեղ, 116 կգ ընդհանուր քաշով, 400 եվրո ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Հայ օգնության միության Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնին անհատույց հանձնելու համար:

2. Հայ օգնության միությանը՝ բեռի ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հումանիտար բեռի ցանկ

Հեղուկ օճառի տարրաներ /դիսպենսերներ/

[illegible] /9.13

| հ/հ | նկարագրություն | միավոր | քանակ |
|---|---|---|---|
| 1 | Դիսպենսեր | հատ | 100 |
| 2 | Պլասիկ շշեր | հատ | 100 |
| 3 | Շշերի կափարիչներ | հատ | 100 |
| 4 | Ափսեներ | հատ | 15 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 069 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/960-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N ԱԲ/22.2/578-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունվարի 23-ի N 06/3-8/1530-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված վիրաբուժական, անեսթեզիոլոգիական, լաբորատոր սարքավորումները և գործիքները, բժշկական նշանակության մեկանգամյա օգտագործման պարագաները (45 տեղ, 2,669 կգ ընդհանուր քաշով, 253,614.38 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ-070-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/959-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/743-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1472-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (323 տեղ, 3,015 կգ ընդհանուր քաշով, 52,150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,150 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի**

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյներների համարներն են՝ TEMU 353057-1: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52150.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2150.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 3015.00 կգ, տեղերի քանակը 323:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 230 | Հատ | Ձմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

Ա-1/9.16

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 250 | Հատ | Զմեռային բաճկոն | | **4398.71** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 230 | Հատ | Զմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 230 | Հատ | Զմեռային բաճկոն | | **4178.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 100 | Հատ | Զմեռային բաճկոն | | **1979.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 150 | Հատ | Զմեռային բաճկոն | | **2748.75** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 100 | Հատ | Զմեռային բաճկոն | | **1979.10** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 373 | Հատ | Զմեռային բաճկոն | | **7619.54** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 3015.00 | 52150.00 | |

02528755
WV ARMENIAN BRANCH

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 հունվարի 2017 թվականի N Մ - 071 – Ա**

**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունվարի 27-ին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 30-ի N 01.1/80-2/1188-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 26-ի N 06/3-8/2224 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռք բերված թրթուրավոր տրակտորը իր աքսեսուարներով (2 տեղ, 7,500 կգ քաշով, 2,399,000 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,037.000 ռուբլի, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա, նոյեմբերի 11-ի N Մ-1094-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում: Բեռն անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գնիշիկ համայնքին:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ - 072 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/978-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1311-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված N 02-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Բյուրեղ» ջրի մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2015 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված N 002/18/09/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2014 թվականի փետրվարի 11-ի N 01, 2016 թվականի հունվարի 13-ի N 02 և փետրվարի 19-ի N 03 համաձայնագրերի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման աշխատանքների իրականացում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ - 073 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-919-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 27-ի N 01.1/80-2/996-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1308-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (N 1)» N Մ-919-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1) 1-ին կետի 2-րդ պարբերությունում «4,363,333 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերը փոխարինել «6,663,333 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերով.

2) 1-ին կետի 2-րդ պարբերությունում «դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2017 թվականի հունվարի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 074 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/820-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N ԱԲ/22.2/559-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1309-17 եզրակացությունները, **որոշում է**.*

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր պարագաներ՝ 1 տեղ, 48.6 կգ ընդհանուր քաշով, 1,026.29 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 993.05 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 075 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N 01.1/80-2/819-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 19-ի N ԱՐ/22.2/457-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1391-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (բժշկական պարագաներ՝ 28 տեղ, 412.7 կգ ընդհանուր քաշով, 3,426.12 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 15,334 դանիական կրոն, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 076 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿ-ՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/916-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N ԱԲ/22.2/577-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 20-ի N 06/3-8/1478-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հիվանդությունների վերահսկման և կանխարգել-ման կենտրոնի (CDC) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախա-րարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր թեստեր և նյութեր՝ 2 տեղ, 34 կգ ընդհանուր քաշով, 20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,869 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվան-դությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների պետական կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 077 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱ-ՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 24-ի N 01.1/80-2/917-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 23-ի N ԱԲ/22.2/586-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 19-ի N 06/3-8/1312-17 եզրակացությունները, **որոշում է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտի վերահսկողության դաշնային ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռների (հեղուկային քրոմատոգրաֆ՝ 1 հավաքածու, 105,122,654.58 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, գազային քրոմատոգրաֆներ՝ 6 հավաքածու, 73,552,917.63 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, և ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրեր՝ 75,769,097.80 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունվարի 2017 թվականի N Մ- 078 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N 01.1/80-2/543-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունվարի 16-ի N 03/07-1/267-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 16-ի N ԱԲ/22.2/254-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/922-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Շվեդիայի «Ryhov» մարզային հիվանդանոցի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բժշկական սարքավորումների և պարագաների (1 տեղ, 115 կգ ընդհանուր քաշով, 43,000 շվեդական կրոնին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,663.08 շվեդական կրոն, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունվարի 2017 թվականի N Մ- 079 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 25-ի N 01.1/80-2/997-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 25-ի N ՎՀ/22.2/680-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 23-ի N 06/3-8/1688-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 4 տեղ, 91 կգ ընդհանուր քաշով, 3,025 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 փետրվարի 2017 թվականի N Մ- 080 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունվարի 27-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ԲՀԻՕՀՀՄ) ԿՈՂՄԻՑ 2017-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվարի 18-ի N 01.1/80-2/526-17, հունվարի 30-ի N 01.1/80-2/1299-17, փետրվարի 6-ի N 01.1/80-2/1710-17, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2017 թվականի հունվարի 17–ի N 1111/304-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունվարի 17-ի N 02/14/448-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի հունվարի 17-ի N 05/18.2/136-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունվարի 16–ի N ԱԲ/22.2/240-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունվարի 17-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/251-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունվարի 16-ի N 03/07-1/259-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունվարի 17-ի N 06/3-8/917-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՀՀՄ) կողմից 2017-2018 թթ. իրականացվող 2,734,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ :

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից

-----------------------------------------------

«31 հունվարի» 2017թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2017 – 18թթ. իրականացվող

# ԾՐԱԳԻՐ

1 Ծրագրի նպատակը

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության կայացմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրացմանն ուղղված առավել չափելի և արդյունավետ բարեփոխումներին, խրախուսել և նպաստել հանդուրժողականության տարածմանը՝ հասարակության տարբեր խոցելի խմբերի նկատմամբ, աջակցել Հայաստանի քաղաքացիական հասարակության կառույցների զարգացմանը, տարածել բաց հասարակության արժեքները և սատարել թափանցիկ ու արդյունավետ պետական կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու դրա կյանքի կոչելուն հանրային կյանքի տարբեր ոլորտներում: Ծրագիրը կարևորում և նպաստում է սոցիալական հավասարության և որակյալ ծառայությունների մատչելիության ապահովմանը կրթության և առողջապահության ոլորտներում՝ հանրության լայն շերտերի համար, ներառյալ խոցելի խմբերը: Ծրագիրը նպատակ ունի աջակցել քաղաքացիական հասարակության տարբեր կառույցներին, ներառյալ հասարակական կազմակերպություններին, անհատներին, ակադեմիական հանրության ներկայացուցիչներին, որպեսզի հնարավորություն ընձեռվի լսելի դարձնելու իրենց ձայնը և կարծիքը պետությանը և հասարակությանը հուզող տարբեր խնդիրների շուրջ, նաև, ապահովելով նրանց մասնակցության բարձր և արդյունավետ մակարդակ պետական կառավարման գործընթացներում:

*ԲՀԻՕՀՀՄ-ն ունի հետևյալ ուղղությունները.* 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Կրթություն, 4. Իրավունք և քրեական արդարադատություն:

ԲՀԻՕՀՀՄ-ի նպատակները հետևյալներն են ըստ ուղղությունների.

Քաղաքացիական հասարակություն

- Հիմնադրամն այս ուղղության միջոցով, ներառյալ դրամաշնորհի տրամադրելն ու սեփական կարողություններն օգտագործելը, աջակցելու է Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը, նրանց ներուժի հզորացմանն ու փորձագիտական գիտելիքների օգտագործմանը: ԲՀԻՕՀՀՄ-ն շարունակելու է հզորացնել հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունքում ունենալով անկախ կազմակերպություններ, որպես պետության համար կարևոր համակարգ՝ երկրում ընթացող ժողովրդավարական գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու համար: Նաև աջակցելու է Հայաստանի հասարակության տարբեր խոցելի խավերին՝ կանանց, երեխաներին, տարեցներին, ազգային, կրոնական, սեռական փոքրամասնություններին, սոցիալապես անապահով մարդկանց, փակ և կիսափակ հաստատություններում գտնվողներին, իրենց հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացմանն ու պաշտպանությանը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության և մեր երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների դրույթների: Կայացած հասարակական կազմակերպություններն իրենց մասնագիտական խոսքն ու սկզբունքային մոտեցումներն են ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի ստեղծման գործընթացներում և իրականացնելու են հստակ մշակված ջատագովություն՝ չափելի և արդյունավետ գործողություններ ունենալու, որոնց ընդունումից հետո իրականացնելու են համակարգային մշտադիտարկում և ներկայացնելու են զեկույցներ թե տեղական և, թե միջազգային մակարդակներում:
Այս ուղղության գերակա խնդիրներից է հանդիսանում խտրականության բոլոր ձևերի իսպառ վերացմանն ուղղված գաղափարախոսության տարածումն ու այս իրավունքի իրականացմանն ուղղված գործողություններին աջակցելը: Խտրականության դեմ օրենքի ընդունման գործընթացին նպաստելը դառնալու է այս ուղղության կարևոր խնդիրներից մեկը:
Մեկ այլ կարևոր խնդիր, այս ուղղությունը տեսնում է նաև խոսքի և արտահայտման ազատության իրավունքին աջակցելու կարևորությունը և իրականացնելու է նախագծեր ուղղված հենց այս իրավունքը պաշտպանելուն: Այս իրավունքի հետ ուղղակիորեն կապվում է հավաքների և միավորումների ազատության իրավունքի իրականացման հարցը, որն առավել արդիական է դառնում 2017թ. Խորհրդարանական ընտրություններին ընդառաջ և իրականացվելու են մշտադիտարկումներ հավաքների ազատության և իրավունքի պաշտպանության, վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ, որոնք ներկայացվելու են պարբերական զեկույցների տեսքով տեղական և միջազգային ատյաններում:
«Քաղաքացիական հասարակություն» ուղղության կարևոր և գերակա խնդիրներից է արդյունավետ և թափանցիկ կառավարման համար նպաստավոր պայմաններ ստեղծելը, ինչը դրսևորվելու է այնպիսի նախագծեր օժանդակելուն, ինչպիսիք են հակակոռուպցիոն և հասարակական, պետական և գործարար միջավայրերում բարեվարքության ապահովմանը նպաստող նախագծերը: Այդ նախագծերն ուղղված կլինեն գնումների ոլորտի շուրջ մշտադիտարկումներ անցկացնելով, առաջարկություններ ներկայացնելով և հանրությանը տեղեկացնելով արդյունքների վերաբերյալ: Այս բոլոր գործողությունները հնարավորություն են ստեղծելու նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկ[illegible]ւմը՝ պետական, հասարակական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Հիմնադրամն այս ուղղության շրջանակներում նպաստելու է մարզային բնակչության ակտիվությանը՝ սեփական համայնքի կառավարման գործընթացներում առավել մասնակցային դառնալուն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնելու երիտասարդներին իրագործելու գաղափարներ, որոնք ուղղված կլինեն իրենց համայնքի զարգացմանը, նաև հասարակության ուշադրությունը գրավելուն երկրի համար կարևորություն ունեցող խնդիրներին:
«Քաղաքացիական հասարակություն» ուղղության գաղափարների իրականացմանը նպաստելու համար ԲՀԻՕՀՀՄ-ն կտրամադրի դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատներին, ինչպես նաև, Հիմնադրամն ինքը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ հետազոտություններ, զեկույցների պատրաստումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր՝ ընդգրկելով տեղական և միջազգային փորձագետների:

<u>Հանրային առողջապահություն</u>

- Այս ուղղության առանցքային գաղափարախոսությունը կառուցվում է առողջապահության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու և երաշխավորելու սկզբունքի վրա: Սրա շրջանակներում Հիմնադրամը շարունակելու է ջատագովել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության և մանկական պալիատիվ խնամքի քաղաքականության ներդրմանը, որոնց հայեցակարգերն արդեն իսկ հաստատվել են ՀՀ Կառավարության կողմից: Սա Հիմնադրամն իրականացնելու է՝ աջակցելով համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի, անհրաժեշտ գործողությունների ծրագրի մշակման, ինչպես նաև ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և բարձրակարգ փորձագիտական օժանդակություն: Այս ամենը Հիմնադրամը կիրականացնի թե իր և, թե գործընկերների փորձագիտական հնարավորություններն օգտագործելով:
  Հիմնադրամի այս ուղղությունն իր ուշադրության կենտրոնում է պահելու Հայաստանի Հոգեկան առողջության քաղաքականության իրականացման գործընթացը՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարության, որը հիմնված է համայնքային խնամքի կենտրոնների սկզբունքի վրա: Ուղղությունը նպաստելու է խոցելի և մարգինալացված խմբերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը, իրականացնելով մշտադիտարկումներ և դրանց արդյունքների հիման վրա մշակելով առաջարկություններ՝ առավել արդյունավետ գործողությունների համար:
  Այս ուղղությունը նաև շարունակելու է իր աշխատանքներն ուղղված համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր ստեղծելուն՝ պալիատիվ խնամքի, հոգեկան առողջության, հանրային առողջապահության և մարդու իրավունքների ոլորտների մասնագետների համար: Հիմնադրամն իր այս կարևոր ուղղության միջոցով նպաստելու է առողջապահության ոլորտի արդյունավետ իրավական կարգավորման գործընթացներին՝ հիմնված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սկզբունքների վրա: Այս համատեքստում կարևոր խնդիր է հանդիսանալու անհատական տվյալների պաշտպանության հարցը, որը բավականին լուրջ քննարկման առարկա է դառնում էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման ծրագրում: Այս ուղղությունը կիրականացվի ինչպես դրամաշնորհների միջոցով, այնպես էլ ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ քննարկումների, հետազոտական աշխատանքների, միջազգային մակարդակի հանդիպումների, նաև պետական, հասարակական կազմակերպությունների և միջազգային ու տեղական համապատասխան փորձագետների ընդգրկմամբ:

<u>Կրթություն</u>

- Հիմնադրամի այս ուղղությունը շարունակելու է լինել ջատագովը որակյալ կրթության հասանելիությանը բոլորի համար, սոցիալական արդարության հաստատմանը կրթական համակարգում, ինչպես նաև հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիությանն եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում իրատեսական, մասնակցային և արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Հիմնադրամի այս ուղղության համար սկզբունքային է լինելու նպաստել բարեվարքության սկզբունքների հաստատմանն ու կիրառմանը Հայաստանի թե հանրակրթության, թե բարձրագույն կրթության ոլորտներում: Հայաստանի կրթական համակարգի քաղաքականացված լինելը, պետական հսկողություն ունենալը, ոչ բավարար ֆինանսական օժանդակությունը, ինչպես նաև հանրակրթական համակարգի խիստ բևեռացումը լինելու են այս ուղղության հիմնական թիրախները: Այս ուղղությունն, օգտագործելով թե Հիմնադրամի, թե հետաքրքրված ակադեմիական համայնքի, թե միջազգային փորձագետների գիտելիքներն ու կարողությունները, նպաստելու է անկախ փորձագիտական գնահատումների և հետազոտությունների իրականացմանը, որոնք էլ խթան են հանդիսանալու առավել արդյունավետ և շոշափելի իրականացվող բարեփոխումներին:
  Ուղղությունը նպատակ է հետապնդում Հայաստանի դպրոցական կրթության քաղաքականության մեջ երաշխավորել սոցիալական հավասարության սկզբունքների ամրագրումը և դրանց լիարժեք իրականացումը, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Այդ նպատակով ստեղծվելու են հնարավորություններ անկախ գնահատումների և մշտադիտարկումների համար, որոնք պետք է վեր հանեն հանրակրթության բնագավառի այժմեական խնդիրները և ծավալեն լայն քննարկումներ տեղի ունեցող բարեփոխումների շուրջ բոլոր հետաքրքված կողմերի և մասնագետների միջև՝ նպատակ ունենալով ազդել ընթացող գործընթացների վրա: Այս ուղղությունը նպաստելու է դպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների գործընթացը, ներառյալ դրանց ֆինանսական միջոցների ծախսելը, դարձնել առավել թափանցիկ և արդյունավետ: Հիմադրամն այս ուղղության շրջանակներում նպատակ է հետապնդելու աջակցել միջազգայնորեն ընդունված չափորոշիչների ներդրմանը մեր կրթական համակարգում, որը պետք է տեղի ունենա ստանձնած պարտավորությունների և մեծածավալ նախագծերի համաձայն և որի արդյունքում, որակյալ դպրոցական կրթությունը մատչելի կլինի բոլորի համար: Այս ուղղությունը կիրականացվի ինչպես դրամաշնորհների տեսքով, որոնք կշնորհվեն և կազմակերպություններին, և տեղական ու միջազգային փորձագետներին, այնպես էլ, որոշ նախաձեռնություններ կիրականացվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պատրաստված առաջարկությունների ջատագովություն, շահագրգիռ լայն խմբերի համար քննարկումների կազմակերպում:

<u>Իրավունք և քրեական արդարադատություն</u>

- Այս ուղղությունն, օգտագործելով Հիմնադրամի և գործընկերների ներուժը, նպաստելու է մեր երկրում օրենքի գերակայության հաստատմանը, Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների թափանցիկ և իրատեսական իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնելու է մատչելի լայն հասարակության համար, աջակցելու է փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությանը, դրանց պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև օժանդակելու է արդարադատության մատչելիության բարձրացմանն՝ աջակցելով փաստաբանական գործունեությանը, այն հասցնելով առավել բարձր որակի: Ուղղությունը, հենվելով տեղական և միջազգային փորձագիտական կարողությունների վրա, նպաստելու է Հայաստանում ընթացող քրեական արդարադատության և դատական ոլորտների բարեփոխումներին, որպեսզի դրանք իրականացվեն չափելի և իրատեսական արդյունքներ ունենալով: Փորձագետների կողմից տրված այլընտրանքային գնահատականները, թույլ են տալու երաշխավորել բարեփոխումների իրատեսական և ոչ իմիտացիոն լինելը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի դեմ արդյունավետ մեխանիզմների ներդրման ուղղությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը: Այս ուղղությունը կարևորելու է Հայաստանի 2017-20թթ. Դատաիրավական բարեփոխումների ծրագրի կազման և իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության առաջարկությունների ներառմանը: «Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության նպատակին հասնելու համար կտրվեն դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատ մասնագետներին, փաստաբաններին, իրավաբան-գիտնականներին, ինչպես նաև կկատարվեն աշխատանքներ ուղղակիորեն ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից, այն է՝ ընդգրկել տեղական և միջազգային փորձագետների, կազմակերպել քննարկումներ, վերապատրաստումներ, որոնք ուղղված կլինեն զարգացնելու տեղական մասնագետների

| | |
|---|---|
| | հմտությունները ու կարողությունները, ինչպես նաև ձևավորել կարծիք և մշակել առաջարկություններ տարբեր օրենքների, օրենսդրական նախաձեռնությունների, հայեցակարգերի և քաղաքականության փաստաթղթերի վերաբերյալ, որոնք առնչվելու են տվյալ ոլորտին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը<br>Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում՝ ապրանքների, սարքավորումների, գրքերի և գրականության, ուսումնական նյութերի ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, հեռահաղորդակցման և կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցների և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում, տարեկան ֆինանսական աուդիտի ծախսերի ԱԱՀ-ից ազատում, ԲՀԻՕՀՀՄ-ի համար ավտոմեքենայի ձեռքբերման ԱԱՀ-ից և մաքսազերծման վճարներից ազատում: |
| 3. | Բարեգործը<br>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջյուգի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ)՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով: |
| 4. | Ծրագիրը կատարողը<br>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ<br>Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758<br>Իրավաբանական հասցե՝ Արամի 44<br>ՀՎՀՀ՝ 02535097 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը<br>Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է և Երևանում, և մարզերում: Ծրագրերն իրականացվում են կրթության, առողջապահության և իրավա-հասարակական բնագավառներում: |
| 6. | Ծրագրի բյուջեն<br>ԲՀԻՕՀՀՄ-ի 2017 – 18թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 2,734,000 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների.<br>1. Քաղաքացիական հասարակություն — 1,950,000 ԱՄՆ դոլար (1,015,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 935,000 ԱՄՆ դոլար 2018թ.)<br>2. Հանրային առողջապահություն — 160,000 ԱՄՆ դոլար (80,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 80,000 ԱՄՆ դոլար 2018թ.)<br>3. Կրթություն — 180,000 ԱՄՆ դոլար (90,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2018թ.)<br>4. Իրավունք և քրեական արդարադատություն — 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2018թ.)<br>5. Կազմակերպչական ծախսեր — 244,000 ԱՄՆ դոլար (104,500 ԱՄՆ դոլար 2017թ. և 139,500 ԱՄՆ դոլար 2018թ.)<br>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջյուգի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ) կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը մոտ 683,500 ԱՄՆ դոլար): |
| 7. | Բարեգործություն ստացողը<br><br>«Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողները կհանդիսանան ցանկում ընդգրկված կազմակերպությունները.<br><br>«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Պուշկինի 96, ք. Գյումրի 3102, Շիրակի մարզ<br>ՀՎՀՀ՝ 05522266<br>«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ<br>ՀՎՀՀ՝ 06926024<br>«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Երվանդ Քոչար 20, ք. Երևան 0070<br>ՀՎՀՀ՝ 00055317<br>«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Անտառային 164/1, ք. Երևան 0019<br>ՀՎՀՀ՝ 00063072<br>«Մանդատ» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002<br>ՀՎՀՀ՝ 02709141<br>«Հայաստանի հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Պուշկինի 3ա, ք. Երևան 0010<br>ՀՎՀՀ՝ 01215357<br>«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Հալաբյան 22բ., բն. 42, ք. Երևան<br>ՀՎՀՀ՝ 01229454<br>«Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպություն<br>Գտնվելու վայրը՝ Սարյան 30, 2-րդ հարկ, ք. Երևան |

ՀՎՀՀ՝ 02597658
«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Շահումյան 68ա, ք. Արմավիր 0901, Արմավիրի մարզ
ՀՎՀՀ՝ 04417204
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պռոշյան 8, ք. Մարտունի 1402, Գեղարքունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 08410372
«Գորիսի մամուլի ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Անկախության 2, ք. Գորիս, Սյունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 09207456
««Խորանարդ» ինտելեկտուալ կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մ. Մկրտչյան 37ա/1, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05528262
«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02554073
«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սոսեի 2, բն. 32, ք. Երևան 0019
ՀՎՀՀ՝ 00150831
«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Տերյան 62, բն. 35, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02576934
«Բուն» գիտամշակութային հիմնադրամ
Գտնվելու վայրը՝ Մաշտոցի 40ա, բն. 34, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02623069
«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Թումանյան 21/1, ք. Երևան,
ՀՎՀՀ՝ 00116201
«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Հալաբյան 6/1, սենյակ 316ա
ՀՎՀՀ՝ 01261445
«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» իրավապաշտպան ոչ առևտրային կազմակերպությունների միություն
Գտնվելու վայրը՝ Տերյան 62, բն. 35, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02641695
«Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Չարենցի 15, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01524462
«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպություն

Գտնվելու վայրը՝ Մաշտոցի 13, սենյակ 7, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02565939
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ամիրյան 11, սենյակ 24, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 0259273
«Սի-Փի-Այ» իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Քոչարյան 6, բն. 39, Նոր Նորք, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 39209667
«Ամբրելլա» միջազգային լրագրողների ցանց հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Անդրանիկի 114, բն. 1
ՀՎՀՀ՝ 01846158

Սակայն սրանցով հնարավոր դրամաշնորհառուների ցանկը չի սահմանափակվելու: Հիմնադրամը, «Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում, նախատեսում է նաև դրամաշնորհային աջակցություն ցուցաբերել մարդու իրավունքների և խղճի խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպությունների և անհատների, որոնք կընտրվեն իրենց կողմից ներկայացված ծրագրային առաջարկների հիման վրա: Ներկայացված ծրագրերը հաստատվելու են ԲՀԻՕՀՀԱ-ի Տնօրենների խորհրդի և ցանցային ծրագրերի Խորհուրդների կողմից:

Ծրագրային առաջարկների ընտրության չափանիշները միանման են ԲՀԻՕՀՀԱ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

**«Հանրային առողջապահություն»** ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողները կհանդիսանան ցանկում ընդգրկված կազմակերպությունները.

«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Արշակունյաց պող. 2, 4-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00885303
**Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան**
**Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025**
**ՀՎՀՀ՝ 01503448**
Երևանի պետական համալսարան
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ավան, Դուրյան թաղամաս 45, բն. 11, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00855742
«Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մամիկոնյանց 30, ք. Երևան

ՀՎՀՀ՝ 01008345
«Խնամք» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մոլդովական 2, բն. 1, ք. Երևան 0065
ՀՎՀՀ՝ 00845121

Սակայն սրանցով հնարավոր դրամաշնորհառուների ցանկը չի սահմանափակվելու: Եվ 2017-18թթ. Հիմնադրամը, «Հանրային առողջապահություն» ուղղության շրջանակներում, նախատեսում է նաև դրամաշնորհային աջակցություն ցուցաբերել առողջապահության ոլորտում մարդու իրավունքներով և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀերի, անհատների, ում համար իրավունքի գերակայությունն առողջապահության ոլորտում կլինի գերնպատակ: Դրամաշնորհ ստացողները կընտրվեն իրենց կողմից ներկայացված ծրագրային հայտերի հիման վրա: Ներկայացված ծրագրային հայտերը հաստատվելու են ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի և ԲՀՀ Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի Խորհրդի կողմից:

«Կրթություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողները կհանդիսանան ցանկում ընդգրկված կազմակերպությունները.

«Հանրային քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Նալբանդյան 50, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02626488
«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Կորյունի 19ա, ք. Երևան 0009
ՀՎՀՀ՝ 01212788

Սակայն սրանցով հնարավոր դրամաշնորհառուների ցանկը չի սահմանափակվելու: Եվ 2017-18թթ. Հիմնադրամը, «Կրթություն» ուղղության շրջանակներում, նախատեսում է նաև դրամաշնորհային աջակցություն ցուցաբերել ոլորտում գործող այլ կազմակերպությունների, ԲՈՒՀերի, դպրոցների և անհատ հետազոտողների: Դրամաշնորհ ստացողները կընտրվեն իրենց կողմից ներկայացված ծրագրային հայտերի հիման վրա: Ներկայացված ծրագրային հայտերը հաստատվելու են ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի և ԲՀՀ-ի Կրթության աջակցման ցանցային ծրագրի Խորհրդի կողմից:

**«Իրավունք և քրեական արդարադատություն»** ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողը կհանդիսանա ստորև ներկայացված կազմակերպությունը.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06926024

Այս կազմակերպության ընտրությունը կատարվել է ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդական խմբի անդամ կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է ԲՀԻՕՀՀՄ-ի տեղական Տնօրենների և ԲՀՀ-ի Մարդու իրավունքների նախաձեռնություն ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, Խորհրդի կողմից:

Սակայն միայն այս կազմակերպությամբ հնարավոր դրամաշնորհառուների ցանկը չի սահմանափակվելու: Եվ 2017-18թթ. Հիմնադրամի այս ուղղության դրամաշնորհ ստացողներն են հանդիսանում նաև իրավունքի գերակայության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, անհատներ, իրավաբան-գիտնականներ, փաստաբաններ, որոնց ընտրությունը կկատարվի իրենց կողմից ներկայացված ծրագրային հայտերի հիման վրա:

<u>2017-18թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից ծրագրային հայտերի ընտրությունը կկատարվի հետևյալ հիմնական չափանիշներով՝</u>

ա) ներկայացված հայտի համապատասխանելիությունը Հիմնադրամի 2017-18թթ. Ռազմավարական ուղղություններին
բ) նախագծի արդիականությունն ու իրատեսական լինելը
գ) ներկայացված հայտի նպատակների, խնդիրների և դրանց իրականացման մեխանիզմների միմյանց համապատասխանելի լինելը և դրանց արդյունավետությունը
դ) պահանջվող բյուջեի և այլ միջոցների համապատասխանությունը ներկայացված նպատակներին
ե) հայտ ներկայացրած կազմակերպության և ընդգրկված աշխատակազմի կամ անհատի պատրաստվածությունը
զ) հայտն իրականացնելու ժամանակ համագործակցության առկայությունը պետական և հասարակական այլ կառույցների ու կազմակերպությունների հետ:

8. Ծրագրի իրականացման տևողությունը
ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագիրը կիրականացվի 2 տարվա ընթացքում՝ 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

2017-18թ. <u>«Քաղաքացիական հասարակություն»</u> ուղղության շրջանակներում նախատեսվում է աջակցել և իրականացնել հետևյալ նախաձեռնությունները.

ա) 2017-18թթ. Հիմնադրամն օժանդակելու է Հայաստանի մարզերում մարդու իրավունքների և ազատությունների վիճակի բարելավմանը՝ տրամադրելով դրամաշնորհներ մարզային հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները՝ մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության և ջատագովության ոլորտում, ինչպես նաև նպաստելու է, որպեսզի նրանք նոր հնարավորություններ ստեղծեն համայնքներում մասնակցային գործընթացի խրախուսման և ակտիվացման համար: Հիմնադրամն իր մարզային և երևանյան գործընկերների հետ միասին իրականացնելու է հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ մարզերում՝ կապված 2017թ. Խորհրդարանական ընտրությունների հետ: Այս նախաձեռնությունները նպատակ են հետապնդելու ծավալել ազատ երկխոսություն քաղաքացիական հասարակության և ընտրության գնացող կուսակցությունների ու դաշինքների միջև, փորձելով ազդել նրանց վրա ներառելու քաղաքացիական հասարակության կողմից վերհանված

խնդիրներն ու դրանց լուծումները իրենց քաղաքական ծրագրերում: Երկու տարվա ընթացքում կտրամադրվի մինչև 10 դրամաշնորհ: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 360,000 ԱՄՆ դոլար (180,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 180,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

բ) 2017-18թթ. շարունակվելու են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ուղղված նախաձեռնություններ: Երկու տարվա ընթացքում հայտարարվելու են նվազագույնը թվով 4 մրցույթներ, որոնց շրջանակներում հնարավորություն է ստեղծվելու ներկայացնել Հայաստանի համար հրատապ հարցերի շուրջ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, մշակված փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև դրանց շուրջ բանավեճեր և քննարկումներ կազմակերպելուն ուղղված հայտեր: Մրցույթի արդյունքում դրամաշնորհների են արժանանալու անհատներ, փորձագիտական խմբեր, երիտասարդ հետազոտողներ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ: Այս նախաձեռնության շրջանակներում քաղաքականության կրթաթոշակառուներին հնարավորություն կընձեռնվի մասնակցել կարողությունների հզորացման դասընթացների, միջազգային փորձագետների մասնակցությամբ թե Հայաստանում, թե արտասահմանում: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 180,000 ԱՄՆ դոլար (90,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

գ) 2017-18թթ. քաղաքացիական հասարակության ուղղությունը շարունակելու է իրականացնել իր հիմնական առաքելությունը, այն է՝ Հայաստանում օժանդակել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանն այնպիսի խավերի մոտ, ինչպիսիք են կանայք, երեխաները, փոքրամասնությունները, ծերերը և հասարակության այլ խոցելի շերտեր, որոնք կունենան այդ պաշտպանության անհրաժեշտությունը: Այս նախաձեռնության շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու այնպիսի գործողությունների, որոնք նպաստելու են Ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունմանը և դրա իրականացման գործընթացի մշտադիտարկմանը՝ որպես պետության պարտավորություն: Այս նախաձեռնությունը կիրականացվի թե ուղղակիորեն պաշտպանության մեխանիզմներ ստեղծելով և դրանք կիրառելով, թե կազմակերպությունների կարողությունների զարգացման և հզորացման ճանապարհով, որի արդյունքում իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները գործնական մակարդակում կիրականացնեն ոտնահարված իրավունքների պաշտպանություն և վերականգնում, ինչպես նաև մշտադիտարկումներ և ուսումնասիրություններ իրականացնելով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հավաքների ազատություն, կրոնական ազատություններ, կանանց իրավունքների իրականացում, խոսքի և արտահայտման ազատություն, պետության կողմից ստանձնած պարտավորությունների իրականացում, կպատրաստի առաջարկություններ և կներկայացնի դրանք տեղական և միջազգային որոշում ընդունող մարմինների, դրանց առավել արդյունավետ վերջնարդյունքներ ունենալու ակնկալիքով: Միջազգային պարտավորությունների շարքին են դասվում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի դիտարկումը և այլն: Նախաձեռնությունը կյանքի կկոչվի հիմնականում գործընկեր կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի միջոցով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 400,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 200,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

դ) 2017-18թթ. Հիմնադրամը, քաղաքացիական հասարակության ուղղության շրջանակներում, իր ուժերով, կշարունակի իր գործունեությունն ուղղված հասարակությանը հուզող խնդիրներին առնչվող տարբեր հարցերի շուրջ հանրային լայն

քննարկումներ անցկացնելը, որոնց մասնակից կդառնան և պետական, և հասարակական, և քաղաքական տարբեր կուսակցությունների, և միջազգային կազմակերպությունների բոլոր հետաքրքրված անձիք: Այս քննարկումները կարևորվում են տարբեր խնդիրների լուծման գործընթացներում ընդգրկված պետական, համայնքային, հասարակական և միջազգային կառույցների միջև կառուցողական բանավեճի ծավալմանն ու մտքերի փոխանակմանը: Երկու տարվա ժամանակահատվածում, այս նախաձեռնությունների շրջանակներում նախատեսվում է կազմակերպել մինչև 40 քննարկումներ, հանդիպումներ, կլոր-սեղաններ, բանավեճեր, տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի մարզերում: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

ե) 2017-18թթ. Հիմնադրամը շարունակելու է որպես կարևոր նպատակ ունենալ տարբեր երիտասարդական նախաձեռնություններին աջակցելը, հիմնականում ՀՀ մարզերում, որոնք ուղղված են լինելու լուծելու համայնքային նշանակություն, հետաքրքրություն և կարևորություն ունեցող խնդիրներ: Սրանք խրախուսելու են համայնքի անդամների ակտիվ ներգրավվածությունն իրենց համայնքի խնդիրների լուծման գործընթացներում, ապահովելու են մասնակցային գործընթացը: Այս նախաձեռնության շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել միջոցառումներ, որոնք կնպաստեն երիտասարդների մոտ ժամանակակից տարբեր հնարավորություններից օգտվելու հմտությունների զարգացմանը, որոնք վերաբերվելու են տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը, համայնքային մակարդակում տարբեր ծառայությունների մատուցման որակի և թափանցիկության հետ կապված հարցերի մշտադիտարկմանը, նաև 2017թ. ապրիլին կայանալիք Խորհրդարանական ընտրությունների ժամանակ դիտորդություն անելուն: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կիրականացվեն մոտ 8 վերապատրաստման դասընթացներ և կտրամադրվի մինչև 20 փոքր դրամաշնորհ:Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

զ) 2017-18թթ. Հիմնադրամն իր «Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում իրականացնելու է Հայաստանում արդյունավետ և թափանցիկ կառավարման մշակույթի ներդրմանն ուղղված նախաձեռնությունների աջակցում: Գործընկեր կազմակերպությունների միջոցով իրականացվելու են բարեվարքության ապահովմանն ուղղված նախագծեր, այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են վարչական ռեսուրսի օգտագործումը ընտրությունների ժամանակ, վարկային միջոցների արդյունավետ ծախսերը կրթության ոլորտում, պետական գնումներն ու ձեռքբերումները կրթության, առողջապահության, հանրային ծառայությունների մատուցման ժամանակ: Այս նախագծերը նպաստելու են Հայաստանում կոռուպցիայի վերացմանը, արդյունավետ և թափանցիկ կառավարման մշակույթի ձևավորմանը: Այս ոլորտում կարևոր գործիք է հանդիսանալու հետաքննական լրագրությունը, որին Հիմնադրամն աջակցելու է: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 8 դրամաշնորհ: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 400,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 200,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

է) 2017-18թթ. Հիմնադրամը շարունակելու է աջակցություն ցուցաբերել «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասար իրավունքների» հասարակական կազմակերպությանը, որը տարբեր հասարակական կազմակերպությունների և անհատների միավորում է և ցանկություն ունի տեսնել Հայաստանը խտրականության բոլոր ձևերից ազատված երկիր, ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում, և որտեղ որևէ անձ չի ենթարկվում որևէ տեսակի խտրականության: Այս կոալիցիային օժանդակություն է ցուցաբերվելու թե օրենսդրական և, թե իրավապաշտպանական գործունեություն

իրականացնելու համար: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 160,000 ԱՄՆ դոլար (80,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 80,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

ը) 2017-18թթ. «Քաղաքացիական հասարակություն» ուղղության կարևոր նախաձեռնություններից է լինելու նպաստել Հայաստանում խոսքի և արտահայտման, ինչպես նաև հավաքների և միավորումների ազատության և իրավունքի իրականացմանն ու պաշտպանությանը: Այս նախաձեռնության շրջանակներում Հիմնադրամը աջակցություն կցուցաբերի հասարակական կազմակերպություններին իրականացնել մշտադիտարկումներ հավաքների ազատության խախտման դեպքերի փաստահավաքման նպատակով: Նաև աջակցություն կցուցաբերվի լրագրողական նախաձեռնություններին՝ նոր հարթակների ստեղծման և ԶԼՄ-ների ոլորտում հետազոտությունների իրականացման համար: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 4 դրամաշնորհ: Նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմում է 320,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 120,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

«Քաղաքացիական հասարակություն» նախաձեռնության ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 1,950,000 ԱՄՆ դոլար (1,015,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 935,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

2017-2018թ.թ. <u>«Հանրային առողջապահություն»</u> ուղղությամբ նախատեսվում է իրականացնել նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն Հայաստանում հանրային առողջապահության խնդիրների լուծմանը՝ մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից: Դրանք ներառելու են տարբեր մոտեցումներ՝ խախտված իրավունքների տվյալների բազա կազմելը, քաղաքականությունների մշակումը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների իրականացման համար հիմք ստեղծելը: Ուղղության շրջանակներում կարևորվելու է առողջության և իրավունքի ոլորտների համադրությունը, խոցելի խավերի առողջապահական խնդիրների շուրջ շահերի պաշտպանությունը և այս ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը: Այս ուղղությունների շրջանակներում իրականացվելու են հետևյալ ենթաուղղությունները՝ իրենց համապատասխան բյուջեներով.

ա) «Իրավունք և առողջապահություն» ենթաուղղության նպատակն է ներդնել մարդու իրավունքների և ազատությունների սկզբունքները Հայաստանի հանրային առողջապահության ոլորտում, ինչպես նաև աջակցել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը և իրականացնել այդ խմբերի շահերի պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններ: Ենթաուղղության շրջանակներում կատարվելու է մարդու առողջությանը վերաբերող ՀՀ օրենքների և օրենսդրական ակտերի վերլուծություն և առաջարկությունների մշակում, կատարվելու են իրավունքի և առողջապահության խնդիրներն արծարծող ուսուցողական ձեռնարկների մշակման ու տարածման աշխատանքներ, իրականացվելու են իրավունքի և առողջապահության ոլորտի մասնագետների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Այս ենթաուղղության ուշադրության կենտրոնում են լինելու բժիշկների և պացիենտների իրավունքների պաշտպանության հարցերը, դրանց մասին տեղեկատվության բարձրացումն ու շահերի պաշտպանությունը: Հիմնադրամն այս ուղղության միջոցով փորձելու է ստեղծել երաշխիքներ, որպեսզի հանրային առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումները չոտնահարեն մարդու իրավունքները, ինչպես օրինակ, էլեկտրոնային առողջապահության ներդրման պարագայում պատշաճ պաշտպանվեն անձի անհատական տվյալների գաղտնիության սկզբունքները: Ենթաուղղության շրջանակներում դրամաշնորհի կստանա «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 3 դրամաշնորհ:

«Իրավունք և առողջապահություն» ենթաուղղության բյուջեն կազմում է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

բ) «Ցավամոքիչ (պալիատիվ) խնամք» ենթաուղղության նպատակն է աջակցել այդ ոլորտի քաղաքականության իրականացմանը՝ բարելավելով օրենսդրական դաշտը և իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև տեղեկացնել լայն հասարակությանը պալիատիվ խնամքի մասին:
Այս ենթաուղղության շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի մշակված քաղաքականության իրականացմանը, որի հայեցակարգը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Ենթաուղղության աջակցումը ներառում է՝ համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծում, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ բարձրակարգ տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ պարբերական քննարկումների կազմակերպում: Ենթաուղղության շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել պալիատիվ խնամքի ծառայությունների իրականացմանը՝ հետագայում պետական ֆինանսավորում ստանալու ակնկալիքով: Այս ենթաուղղությունն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության, Գլոբալ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ենթաուղղության աշխատանքները կհամակարգվեն ուղղակիորեն Հիմնադրամի, և կիրականացվեն պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:
Աջակցություն է ցուցաբերվելու միջազգային և տեղական մակարդակի փորձագետների մասնակցությամբ քննարկումների և խորհրդատվությունների կազմակերպմանը՝ խնդրով հետաքրքրված մասնագետների և կառույցների համար: Դրամաշնորհներ կտրվեն Երևանի պետական համալսարանին, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին, Մանկական բժիշկների հայկական ասոցիացիային, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ին: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 5 դրամաշնորհ:
«Ցավամոքիչ խնամք» ենթաուղղության բյուջեն կազմում է 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2018թ.):

գ) «Հոգեկան առողջություն» ենթաուղղության նպատակն է 2017-18թթ. աջակցել Հայաստանում հոգեկան առողջության ոլորտի ռազմավարության իրականացմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների պատրաստմանը: Աշխատանքները ներառում են նաև համապատասխան օրենսդրական փոփոխությունների մշակմանն ուղղված աջակցություն: Նախատեսվում է լայն հանրային քննարկումների կազմակերպում՝ իրականացվող աշխատանքները ներկայացնելու նպատակով:
Այս ենթաուղղության աշխատանքներն իրականացվում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ: Ենթաուղղության շրջանակներում իրականացվող նախաձեռնություններում ակտիվ մասնակցություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինները:
Այս ենթաուղղության աշխատանքները կհամակարգվեն Հիմնադրամի կողմից, իսկ կիրականացվեն տեղական և միջազգային փորձագետների ընդգրկմամբ: Տեղական մասնագետները կներկայացնեն ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի, Առողջապահության և Կրթության և գիտության նախարարությունները, ԵՊՀ-ն, ԵՊԲՀ-ն և մասնագիտական հասարակական կառույցներ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող հիվանդների համար Հիմնադրամի ֆինանսական

| | |
|---|---|
| | օժանդակությամբ Սպիտակ քաղաքում 2016թ. սկսել է գործել համայնքային կենտրոնը, որի աշխատանքները համակարգում է «Խնամք» հասարակական կազմակերպությունը:<br>«Հոգեկան առողջություն» ենթաուղղության երկու տարվա բյուջեն կազմում է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br>«Հանրային առողջապահություն» ուղղության ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 160,000 ԱՄՆ դոլար (80,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 80,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br><br>2017-2018թ.թ. «Կրթություն» ուղղության շրջանակներում նախատեսվում է իրականացնել նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն վեր հանել Հայաստանի հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտին առնչվող խնդիրները, կտան գնահատական այդ ոլորտներում ընթացող բարեփոխումներին, կաջակցեն քննարկումների և բանավեճերի շարքերին՝ հետաքրքրված անձանց և կառույցների մասնակցությամբ: Այս ուղղության աշխատանքները, մեծ մասով, իրենցից ներկայացնելու են հետազոտություններ, անկախ գնահատումներ, որոնք հիմնված են լինելու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և նրանց փորձագետների կողմից մշակված և, արդեն իսկ փորձարկված, մեթոդաբանությունների վրա: Այս հետազոտությունների, ուսումնասիրությունների և անկախ գնահատումների արդյունքների/հաշվետվությունների շահառուներն են հանդիսանալու ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, միջազգային կազմակերպությունները, կրթության ոլորտով հետաքրքրված անհատները, ակադեմիական համայնքի ներկայացուցիչները, ԲՈՒՀերը, դպրոցները, ինչպես նաև Հայաստանի լայն հանրությունը:<br>2017-18թթ. այս ուղղության հետաքրքրության թեմաներն են լինելու բարեվարքության արմատավորման արդյունավետ եղանակները ամբողջ կրթության համակարգում, հետազոտական բաղադրիչը բարձրագույն կրթության մեջ և դրա ազդեցությունը որակյալ կրթության վրա, սոցիալական արդարության ապահովումը հանրակրթության ոլորտում և որակյալ կրթության հասանելիությունը որպես կրթության իրավունքի իրականացման ձև: Բոլոր այս ուսումնասիրությունները կունենան առաջարկություններ՝ քաղաքականության մակարդակում իրականացնելու նպատակով: Դրանք կներկայացվեն ոլորտում կարևոր դերակատարում ունեցող կառույցներին թե տեղական և, թե միջազգային մակարդակներում:<br>Այս ուղղության աշխատանքները, որոնք ներառելու են միջազգային և տեղական մակարդակի փորձագետների մասնակցությամբ քննարկումների և խորհրդատվությունների կազմակերպում, կհամակարգվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից: Դրամաշնորհ կտրվի «Հանրային քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպությանը, ինչպես նաև կտրվեն անհատական դրամաշնորհներ՝ հետազոտական և փորձագիտական նպատակներով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի 6-8 դրամաշնորհ:<br>Հիմնադրամը կարևորում է նաև ներառական կրթության զարգացումը ոչ միայն հանրակրթության մակարդակում, այլ նաև նախադպրոցական հաստատություններում: Այս նպատակով դրամաշնորհ կտրվի «Հույսի կամուրջ» ՀԿ-ին՝ մշակել և հետաքրքրված բոլոր կառույցների հետ քննարկել նախակրթարաններում ներառական կրթության ներդրմանն ուղղված հայեցակարգային դրույթները: Այս նախաձեռնությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ-ի հետ խորհրդատվությամբ:<br><br>«Կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 180,000 ԱՄՆ դոլար (90,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br><br>2017-18թթ. <u>«Իրավունք և քրեական արդարադատություն»</u> ուղղությունը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնություններին. |

| | |
|---|---|
| | ա) 2017թ. և 2018թ. աշխատանքների ամբողջ ծավալով շարունակվելու է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու փակ հաստատություններում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված նախաձեռնությունը: Նախաձեռնությունն իրականացվելու է Արդարադատության նախարարության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբի» կողմից: Այս նախաձեռնության շրջանակներում Խումբը իրականացնելու է հասարակական վերահսկում քրեակատարողական հիմնարկներում: Խմբի անունից 2017 և 2018 թվականներին դրամաշնորհ ստացողը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունն է: Այս նախաձեռնության բյուջեն երկու տարվա համար կազմելու է 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br><br>բ) 2017թ. և 2018թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից իրականացվելու են և համակարգվելու են նաև հետևյալ աշխատանքները. ա/ աջակցություն է ցուցաբերվելու «Ռազմավարական դատավարություն» ծրագրին, որը նպաստում է իրավաբանական և փաստաբանական մասնագիտությունների զարգացմանը Հայաստանում, հնարավորություն ստեղծելով տեղացի փաստաբանների համար մշտապես տեղեկացված լինել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ատյանների աշխատանքներին և փորձին, ինչն էլ մոտեցնում է տեղացի մասնագետներին միջազգային մակարդակին, բ/ աջակցություն է ցուցաբերվելու քրեական արդարադատության ոլորտում տեղական փորձագիտական մտքի զարգացմանը, որը պետք է դառնա այս ոլորտում բոլոր հետաքրքրված մասնագետների և կառույցների միջև առողջ և կառուցողական քննարկումների ու բանավեճի նախաձեռնող: Փորձագետների խումբը պետք է մշակի Հայաստանի քրեական արդարադատության ոլորտի հրատապ խնդիրների վերաբերյալ քաղաքականության գաղափարներ և դարձնի դրանք քննարկման առարկա բոլոր մասնագիտական կառույցների հետ: Խմբի կողմից առաջնային են ճանաչվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ մշակելու պետության պարտավորությունը, հայաստանի դատաիրավական բարեփոխումների 2017-20թթ. իրատեսական, չափելի արդյունքների վրա հիմնված ծրագրի մշակումը, նոր Սահմանադրությամբ պայմանավորված մի շարք օրինագծերի մշակման գործընթացում անկախ և բարձրակարգ փորձագիտական մտքի օգտագործումը:<br>Այս նախաձեռնության իրականացման ժամանակ Հիմնադրամը համագործակցելու է ՀՀ Արդարադատության նախարարին կից Հանրային խորհրդի հետ:<br>Այս նախաձեռնության երկու տարվա բյուջեն կազմելու է 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br><br>«Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2017թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2018թ.):<br><br>Ծրագրի կազմակերպական ծախսերը 2017-2018թթ. համար, որոնք հանդիսանում են ԲՀԻՕՀՀԱ-ի վարչական ծախսերը, կազմում են 244,000 ԱՄՆ դոլար (104,500 ԱՄՆ դոլար 2017թ. և 139,500 ԱՄՆ դոլար 2018թ.): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, <u>ծավալները և նախատեսվող գինը</u> |

2017-18թթ. նախատեսվում է սարքավորումների, ապրանքների, գրքերի, ամսագրերի, CD, DVD-ների ներմուծում և ձեռքբերում, հեռահաղորդակցման և կապի ծառայությունների վարձավճարներից ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, գրասենյակային, ինչպես նաև կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցային և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում: 2018թ. ԲՀԻՕՀՀՄ-ի Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել ավտոմեքենա և պահեստամասեր, որոնց գինը կազմում է 35,000 ԱՄՆ դոլար: Կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվի ավտոմեքենան պարզ կդառնա անցկացված մրցույթի և ստացված հայտերի արդյունքում: Մեքենայի անհրաժեշտությունը պայմանավորված է ԲՀԻՕՀՀՄ-ի Ծրագրի միջոցների բաշխման մոնիտորինգի համար կատարվող աշխատանքների, ինչպես նաև Երևան և մարզեր շրջայցեր կատարելու համար: Ծրագրի ավարտից հետո ձեռք բերվող ավտոմեքենան ծառայելու է Հիմնադրամի կողմից մշակված ծրագրերը կյանքի կոչելուն և դրանց մշտադիտարկումն իրականացնելուն: CD-ները, DVD-ները, գրքերը, ամսագրերը ծառայելու են ուսումնական, կրթական, մշակութային և գիտական նպատակների համար, տրամադրվելու են դպրոցներին, ԲՈՒՀ-երին, գրադարաններին, մշակութային և ստեղծագործական կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին: Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը ըստ տարիների ներկայացված է ստորև`

| Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը | 2017թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը | 2018թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|
| Երկրի ներսում ձեռք բերվող ապրանքներ և սարքավորումներ | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| Երկրի ներսում ծառայություններ<br>ա) հեռահաղորդակցման և կապի ծառայություններ | 4,400 ԱՄՆ դոլար | 4,400 ԱՄՆ դոլար | 8,800 ԱՄՆ դոլար |
| բ) տպագրական ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| գ) գրասենյակի վարձակալություն | 23,000 ԱՄՆ դոլար | 23,000 ԱՄՆ դոլար | 46,000 ԱՄՆ դոլար |
| դ) կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն | 10,000 ԱՄՆ դոլար | 10,000 ԱՄՆ դոլար | 20,000 ԱՄՆ դոլար |
| ե) հյուրանոցային և այլ ծառայություններ | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| զ) թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն | 300 ԱՄՆ դոլար | 300 ԱՄՆ դոլար | 600 ԱՄՆ դոլար |
| է) կոմունալ ծախսեր | 2,840 ԱՄՆ դոլար | 2,840 ԱՄՆ դոլար | 5,680 ԱՄՆ դոլար |
| ը) տարեկան աուդիտ | 30,000 ԱՄՆ դոլար | 30,000 ԱՄՆ դոլար | 60,000 ԱՄՆ դոլար |
| թ) տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր) | 1,800 ԱՄՆ դոլար | 1,800 ԱՄՆ դոլար | 3,600 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող համակարգիչներ | 5 հատ/2,500 ԱՄՆ դոլար | 5 հատ/2,500 ԱՄՆ դոլար | 5,000 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող այլ սարքավորումներ/ համակարգչի անխափան սնուցման սարքեր | 5 հատ/1,500 ԱՄՆ դոլար | 5 հատ/1,500 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող CD, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում | 500 ԱՄՆ դոլար | 500 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող ավտոմեքենա և պահեստամասեր | | 35,000 ԱՄՆ դոլար | 35,000 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 85,840 ԱՄՆ դոլար | 120,840 ԱՄՆ դոլար | 206,680 ԱՄՆ դոլար |

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

2017-18թթ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպական ծախսերը (աշխատավարձ, տարածքի վարձակալում, սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, գործուղման ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ, և այլ գրասենյակային ծախսեր), ինչպես նաև արտերկրից ավտոմեքենայի և պահեստամասերի ձեռք բերում, կազմում են 244,000 ԱՄՆ դոլար (104,500 ԱՄՆ դոլար 2017թ. և 139,500 ԱՄՆ դոլար 2018թ.), որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի 2017-18թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 9%: Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ըստ տարիների ներկայացված է ստորև`

| Կազմակերպական ծախսեր | 2017թ. Ընդհանուր արժեք | 2018թ. Ընդհանուր արժեք | Ընդամենը |
|---|---|---|---|
| Աշխատավարձ | 15,660 ԱՄՆ դոլար | 15,660 ԱՄՆ դոլար | 31,320 ԱՄՆ դոլար |
| Գրասենյակային տարածքի վարձակալում | 23,000 ԱՄՆ դոլար | 23,000 ԱՄՆ դոլար | 46,000 ԱՄՆ դոլար |
| Կոնֆերանսների, սեմինարների | 13,000 ԱՄՆ դոլար | 13,000 ԱՄՆ դոլար | 26,000 ԱՄՆ դոլար |

| | | | |
|---|---|---|---|
| կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն և մասնակիցների գիշերակացի վճար | | | |
| Սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում | 7,000 ԱՄՆ դոլար | 7,000 ԱՄՆ դոլար | 14,000 ԱՄՆ դոլար |
| CD-ների, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում | 500 ԱՄՆ դոլար | 500 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար |
| Տպագրական ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| Գործուղման ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| Թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն | 300 ԱՄՆ դոլար | 300 ԱՄՆ դոլար | 600 ԱՄՆ դոլար |
| Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ | 2,840 ԱՄՆ դոլար | 2,840 ԱՄՆ դոլար | 5,680 ԱՄՆ դոլար |
| Տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր) | 1,800 ԱՄՆ դոլար | 1,800 ԱՄՆ դոլար | 3,600 ԱՄՆ դոլար |
| Միջազգային և տեղական հեռախոսակապ | 1,400 ԱՄՆ դոլար | 1,400 ԱՄՆ դոլար | 2,800 ԱՄՆ դոլար |
| Բջջային հեռախոսակապ "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ | 1,000 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար |
| Ինտերնետ - "Արմենիան Դեյթաքոմ Քամփնի" ՓԲԸ | 2,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար | 4,000 ԱՄՆ դոլար |
| Տարեկան ֆինանսական աուդիտի անցկացում - "Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա" ՓԲԸ | 30,000 ԱՄՆ դոլար | 30,000 ԱՄՆ դոլար | 60,000 ԱՄՆ դոլար |
| Ավտոմեքենայի ձեռքբերում | | 35,000 ԱՄՆ դոլար | 35,000 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 104,500 ԱՄՆ դոլար | 139,500 ԱՄՆ դոլար | 244,000 ԱՄՆ դոլար |

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝

ՀՀ Ազգային ժողովի հետ՝ մի շարք օրենքների մշակման և ընդունման հարցերում մասնավորապես, Առողջապահության, մայրության և մանկության հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, Պետաիրավական հարցերի և եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների հետ:

ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի կողմից, ինչպես նաև ՄԱԿ -ի Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականության վերացման կոմիտեի կողմից մեր երկրին արված հանձնարարականների կատարման և ԵՄ-ի Արևելյան գործընկերության ծրագրերի շրջանակներում քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավման և լայն մասնակցային գործընթացի ապահովման ուղղությամբ:

ՀՀ Առողջապահության նախարարության հետ, կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, նախատեսվում է միջոցառումներ պալիատիվ խնամքի քաղաքականության մշակման, ինչպես նաև ծառայությունների մոդելների փորձնական իրականացման նպատակով: Համագործակցությունը շարունակվելու է հետբուհական կրթական առողջապահական ծրագրերի շրջանակներում առողջապահական ոլորտի մասնագետների հետբուհական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև ապագա բժիշկների և արդեն փորձ ունեցող բժիշկների համար իրավունքի և առողջապահության խնդիրների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ու անցկացման գործում, նաև պացիենտների և բժիշկների իրավունքների պաշտպանության և խնդիրների իրազեկման հարցերի շուրջ: Համագործակցություն է ծավալվելու նաև էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրման գործընթացի շուրջ՝ նպատակ հետապնդելով ունենալ հստակ երաշխիքներ անձի անհատական տվյալների պաշտպանությունը ապահովելու համար:

Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն Հայաստանի հոգեկան առողջության ոլորտի Ռազմավարության իրականացման շրջանակներում, որը ներառում է համայնքային կենտրոնների փորձնական հիմնադրման նախագծերի, դրանց գնահատման և շարունակական իրականացման համար անհրաժեշտ իրավական կարգավորումների մշակման աջակցում:

ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ դատաիրավական ոլորտի բարեփոխումների, խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև ԱՆ-ի կողմից ստեղծված քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հասարակական վերահսկման խմբի գործունեության աջակցության շրջանակներում: ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարին կից Հանրային խորհրդի անդամ:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության հիմնական հարցերը վերբերվում են կրթության ոլորտի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրին, ներառյալ համակարգի ապաքաղաքականացմանն ու բարեվարքության նորմերի հաստատմանը: Առանձին քննարկման հարց է սոցիալական արդարությունն ու հավասարությունը հանրակրթության ոլորտում և դրանց անվերապահորեն հաստատման ու պահպանման մեխանիզմների ներդրումը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ՝ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների աշխատանքային խմբի անդամ: Այս կազմակերպության հետ համագործակցություն է հաստատվել նաև Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի հանրայնացման և ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունման գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու շուրջ:

Հայաստանում Եվրամիության պատվիրակության գրասենյակի հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը և այդ ոլորտում միջազգային նորմերի ներդրմանն ու կիրառմանը: ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակ է հանդիսանում նաև Արևելյան գործընկերության ձևաչափը:

| | |
|---|---|
| | Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Հայաստանում Նիդեռլանդների դեսպանատան (նստավայրը Թբիլիսի) հետ համագործակցում է Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության առավել արդյունավետ իրականացնելու գաղափարների, դրանց մասին լայն հանրությանը տեղեկացնելու շուրջ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը<br>- ԲՀԻՕՀՀԱ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀԱ-ի գործադիր տնօրենի, գ) ԲՀԻՕՀՀԱ-ի Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ) գրասենյակների:<br><br>Վերահսկման եղանակներն են.<br>- Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսական ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀԱ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից);<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի: |